Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն, այլ փրկեալ զմեզ 'ի չարէն. Գի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն:

Օ ի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր:

Եւս եթէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր:

Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն արքայ մեալք. որք ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երեւեցին մարդկան, եթէ պահիցեն: Եւ մէն անժամ ձեզ, այն իսկ են վարձք նոցա:

Այլ դու յորժամ պահիցես, զձգելու քո՝ և լուսիլ բնաս քո:

Օհ մի՛ երեւացիս մարդկան իբրեւ դպահող, այլ հօրն քու՛մ՝ ի ծածուկ. և հայրն քո՝ որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայանապէս:

Այլ գանձէք ձեզ գանձս յերկրի. ուր ցեց և ուտի՛ճ ապականեն և ուր գողք ական հատանեն և գողանան:

Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց, ոչ ուտի՛ճ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գողանան:

Օհ ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին:

Ճառք մարմնոյ ակն է. եթէ ակն քո ուռատ է, ամենայն մարմինդ լուսասոր եղիցի:

Ապա թէ ակն քո չար է՝ ամենայն մարմինդ խաւարին եղիցի. խի արդ՝ եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է, խաւարն որչափ ևս:

Այլ որ կարէ երկուց տերանց ծառայել, կամ զմէն տալիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ զմէն մեծարիցէ, և զմիւսն սրհամարիցէ: Այլ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի:

Ստան այդորիկ ասեմ ձեզ, մի՛ հոգայք վասն ոգւոյ ձերոց՝ զի՛նչ ուտիցէք, կամ զի՛նչ ըմպիցէք. և մի՛ վասն մարմնոց ձերոց՝ թէ զի՛նչ ազանիցիք. ոչ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր՝ և մարմին քան զհանդերձ:

Հայեցարուք ի թռչունս երկնից՝ զի ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովին ի շտեմարանս, և հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա, ոչ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա:

Խի արդ՝ ո՞ր ի ձէնջ առ հողալ իւրում՝ յաւելուլ կալիցէ ի հասակ իւր կանգուն մի:

Այլ վասն հանդերձի զի՛ հոգայք. հայեցարուք ի շուշանն վայրենի՝ որպէս աճէ. ոչ ջանայ, և ոչ նիւթէ:

Այնմ ձեզ՝ զի և ոչ սողամոն յամենայն ի վառսն իւրում զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ:

Խի եթէ զխտան ի վայրի, որ այսօր է՝ և վաղէն ի հնոց

արկանի, Մատուած այնպէս զգեցուցանէ . որչափ ևս առաւել
զձեզ, Թերեհաւատք:

Այսուհետեւ հոգայցէք՝ և ասիցէք . զի՞նչ կերիցուք՝
կամ զի՞նչ արբոյք՝ կամ զի՞նչ զգեցցուք:

Օ՛ր զայդ ամենայն հեթանոսք խնդրեն . քանզի դիտէ
հայրն ձեր երկնաւոր՝ Թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն:

Խնդրեցէք նախ զարքայութիւնն Մատուոյ և զարքարու-
թիւն նորա . և այդ ամենայն յաւելցի ձեզ:

Այսուհետեւ հոգայցէք փասն փաղուն . զի փաղուն
փասն իւր հոգոսցի, շատ է աւուրն չար իւր:

Պատիւ է. 1— 21.

Օտուրդ դատողներին յանդիմանում է. որքեւում է աւրբ Բանբը
շներին պաշտ. յորդորում է աղէկ անել, նեղ դռներով ներս հըս-
նել, մէտէ խօսքով չառնել, այլ Գործով եւ հապարհ:

Այ՛ դատէք՝ զի մի դատիցիք:

Օ՛ր որով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք . և որով
չափով չափէք չափեացի ձեզ:

Օ՛ր տեսանես զչեւ յաւան եղբոր քո, և ՚ի քում ա-
կանդ զգերանդ ոչ տեսանես:

Կամ զհարդ ասես ցեղայր քո, Թո՛ղ հանից զչեւ յա-
կանէ քումմէ. և ահաւադիկ ՚ի քում ականդ գերան կայ:

Կեղծաւոր՝ հան նախ զգերանդ յաւանէ քումմէ, և ապա
հայեացես հանել զչեւ յաւանէ եղբոր քո:

Այ՛ տայք զարքութիւն շանց . և մի՛ արկանէք զմարդա-
րեա . ձեր առաջի խաղաց, զի մի՛ առ ոտն կոխիցեն զնոսա,
և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ:

Խնդրեցէք՝ և տացի ձեզ, հայեցէք՝ և դարձիք, բաղնեցէք՝
և բացցի ձեզ:

Օ՛ր ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բաղկէ՝ բացցի նմա:

Ո՞ր իցէ ՚ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, մի թէ քան տայցէ նմա:

Եւ կամ խնդրիցէ ձուկն, մի թէ ճ տայցէ նմա:

Արդ՝ եթէ դուք որ չարքդ եք՝ դիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել հայրն ձեր որ յերկինս է՝ տայցէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա:

Օ՛ր ամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա. զի այն իսկ են օրէնքն և մարգարէք:

Մտէք ընդ նեղ դուռն. քանզի ընդարձակ է դուռնն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի ՚ի կորուստ, և բազումք են որ մտանեն ընդ նա:

Քանզի անձուկ է դուռնն՝ և նեղ ճանապարհն՝ որ տանի ՚ի կեանս, և սակաւք են որ գտանեն զնա:

Օ՛րդ լեբուք ՚ի սուտ մարգարէիցն՝ որ դան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ՚ի ներքոյ են գայլք յափշտակողք:

Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա. մի թէ քաղիցեն ՚ի յիշոց խաղաղ կամ ՚ի տատասիկ թուղ:

Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ:

Ոչ կարէ ծառ բարի պտուղ չար առնել. և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել:

Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և ՚ի հուր արկանի:

Այս ՚ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա:

Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր, մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս հօր իմոյ՝ որ յերկինս է:



Հաւ. 4. Ժ. 1— 21.

Սէր Տարմնէրը պարտաւորէնք ինքնին՝ առաջ և Աստուծոյ ընդունելի պարտաւոր։ Թաշմամբ օրհնէնք, և շարին շար շրջապարտաւորէնք և լրէժնորիւ շրջնէնք։ և ամէնի հետ խոստովանելու անհրաժեշտէնք։

Աղաչեմ զձեզ եղբարք՝ զԹուԹեամբն Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի սուրբ, հաւայ Աստուծոյ՝ զխօսուն պաշտօնը ձեր։

Եւ մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ և այլ նորոգեցարձք ՚ի նորոգութիւն մտայ ձերոց, առ ՚ի քննել ձեզ զլաւն, եւ եթէ զինչ են կամք Աստուծոյ՝ բարին և հաւայն և կատարեալն։

Օ այս ասեմ շնորհօքն Աստուծոյ՝ որ տուեալ են ինձ, ամենայնի որ է ՚ի ձեզ, մի՛ առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ, այլ խորհել ՚ի զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս և բաժանեաց Աստուծոյ՝ չափ հաւատոց։

Որպէս ՚ի միում մարմնի անդամս բազումս ունիմք, և անդամքն ամենայն ոչ զնոցն գործ ունին։

Նոյնպէս և բազումքս մի մարմին եմք ՚ի Քրիստոս, այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք։

Բայց ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ ազգս ազգս. եթէ մարդարեւութիւն՝ ըստ չափուն հաւատոց։

Եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն, եթէ որ ուսուցանէն՝ ըստ վարդապետութեանն։

Եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն. որ առաւուն է՝ զուարթութեամբ, որ վերակացուն է՝ փութով, որ ողորմին՝ լրջմտութեամբ։

Սէր առանց կեղծաւորութեան. ասել զչար, զհետ երթալ բարեաց։

Յեղբայրսիրութեան առ միմեանս զԹաճք. ՚ի պատիւ զմիմեամբք եղանել,

Ի վայր՝ մի՛ վեհերօտք . հոգւով եռացէք , Տեառն ծառայեցէք :

Յուսով խնդացէք , նեղութեան համբերեցէք , աղօթից ստէպ կացէք :

Ի պէտս սրբոց հաղորդեցարձեռք . զհրեառութեան զհեռ երթայք :

Օրհնեցէք զհալածիչս ձեր , օրհնեցէք և մի՛ անխճանէք : Խնդալ ընդ խնդացօղս , լալ ընդ լացօղս :

Օնոյն միմեանց խորհիջէք . մի՛ ամբարաւանէք , այլ ի խնարհս զիջանիցիք . մի՛ լինիք իմաստունք յոնձինս ձեր :

Այ՛ ումէք չարի չար հատուցանէք . խորհեցարձեռք զբարիս առաջն ամենայն մարդկան :

Եթէ՛ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան բոլոր խաղաղութիւն կալլէք :

Այ՛ զանձանց վրէժխնդրէք սիրելիք , այլ առք տեղն բարկութեան . քանզի գրեալ է . իմ է վրէժխնդրութիւն , և ես հատուցից՝ ասէ Տէր :

Այլ եթէ՛ քաղցեալ իցէ թշնամի քո՝ հաց տուր նմա , և եթէ՛ ծարաւի՝ ջուր տուր նմա . զայս արարեալ՝ կայծաւ կունս հրոյ կուտեսցես ՚ի գլուխ նորա :

Այ՛ յաղթիր ՚ի չարէն . այլ յաղթեալ բարեաւն չարին :

Ա. Կրիստոս . ԳԼ. ԺԳ. հոմար 1— 914 :

Ահա՛ պարգիւները՝ որչափ որ լաւ ընեն , ասանց ուրոյ ոչինչ են : Արեւոյ պարգիւները :

Եթէ՛ զլեզուս մարդկան խօսիցիմ՝ և զհրեշտակաց՝ և սէր ոչ ունիցիմ , եղէ ես իբրեւ սղինձ , որ հնչէ . կամ իբրեւ զծնձկայս՝ որ ղօղանջնա :

Այլ եթէ՛ ունիցիմ մարդարեւութիւն , և գիտիցեմ բոլոր

խորհուրդս ամենայն՝ և զամենայն գիտութիւն, և եթէ ունիցիմ զամենայն հաւատո՝ մինչև զլերինս փոխիսելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ:

Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ:

Ահա երկայնամիտ է՝ քաղցրանայ, սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճի, ոչ հպարտանայ:

Ոչ յանդգնի, ոչ խնդրէ զլուր, ոչ զըդուի, ոչ խորհի զչար:

Ոչ խնդայ ընդ անիրաւութիւն՝ այլ խնդայ ընդ ստութեան:

Ամենայնի տեհ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ:

Ահա ոչ երբեք անկանի. եթէ մարդարեւութիւնք են՝ խափանեցին, եթէ լեզուք՝ լռեցեն, եթէ գիտութիւն՝ խափանեցի:

Քանզի փոքր 'ի շատէ գիտեմք. և փոքր 'ի շատէ մարդարեանամք:

Եւ յոյժամ եկեցէ կատարումն, փոքր 'ի շատէս խափանեցի:

Անչ տղայն էի՝ իբրև զտղայ խօսէի, իբրև զտղայ խորհէի, իբրև զտղայ համարէի. այլ յոյժամ եղէ այր՝ զտղջույթեանն 'ի բաց խափանեցի:

Եւ յոյժամ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խեղամուտ եմ փոքր 'ի շատէ, այլ յայնժամ գիտացից՝ որպէս և նայն ծանեաւ զիս:

Բայց արդ՝ մնան հաւատք, յոյս, սէր, սոքա երեքեան. և մեծ քան զսոսա սէր է:



Հասկ. 42. Ը. 28 — 440.

Ու որ Աստուծոյն սիրում է, Աստուծոյ Գործակից է նրան ահա բարե
Գործի մէջ որոնց առաջնաց ճանաչէ՞ հրաւիրէ՞ նրանց որդարանալու
համար։ Ու որ հարձակ է մեզ բաժանել Աստուծոյն սիրուց։

Բայց գիտեմք՝ եթէ որոց սիրենք զԱստուծոյ՝ յամենայն
գործակից լինի՝ ի բարիս՝ որք հրաւիրանաւն կոչեցան։

Փի զոր յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն և հրաւիրեաց
կերպարանակից լինել պատկերի որդւոյն իւրոյ. զի եղիցի
նա անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց։

Եւ զորս յառաջագոյն հրաւիրեաց՝ զնոսին և կոչեաց. և
զորս կոչեաց, զնոսին և արդարացոյց. և զորս արդարացոյցն,
զնոսին և փառաւորս արար։

Իսկ արդ զի՞նչ ասեմք առ այս. եթէ Աստուծոյ՝ ի
մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ։

Որ յիւր որդին ոչ խնայեաց՝ այլ վասն մեր ամենե
ցուն մատնեաց զնա. զիարդ ոչ նուազ հանդերձ զամենայն
շնորհիցէ մեզ։

Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոյ Աստուծոյ. Աս
տուծոյ է որ արդարացուցանէ։

Իսկ արդ՝ ո՞վ է որ դատապարտ առնիցէ. Քրիստոս
Յիսուս՝ որ մեռաւ մահաւանդ թէ յարուցեալ իսկ է. և
է ընդ աջմէ Աստուծոյ, որ և բարեխօս իսկ է վասն մեր։

Արդ՝ ո՞վ մեկնեացէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի. նե
ղութիւն, թէ անձկութիւն, թէ հալածանք, թէ սով, թէ
մերկութիւն, թէ վիշտք, թէ սուր։

Որպէս և դրեալ է. վասն քո մեռանիւմ զօրհանապաղ,
համարեցաք իբրեւ զոչխար ի սպանդ։

Այլ յայտմ ամենայնի, առաւել յաղթեմք նուազ՝ որ
սիրեացն զմեզ։

Քանզի հաստատեալ եմ, եթէ ոչ մահ և ոչ կեանք
և ոչ հրեշտակ և ոչ իշխանութիւնք. և ոչ որ կանա և

նչ հանդերձեալքն և ոչ զօրութիւնք:

Եւ ոչ բարձրութիւն և ոչ խորութիւն , և ոչ այլ
ինչ արարած՝ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ անտի Աստուծոյ,
որ 'ի Քրիստոս Յիսուս՝ 'ի Տէր մեր:

Հատմ. 41. Ժդ. 1. — 23.

Մարտիկ պէտք չէ՛ որ անարգէն և դատեն ուրիշներին . հետևի՛ր և
ուրիշ բռնիքի համար չըրարիք ոչմէն իրա եղբօրը:

Այլ զտկարացեալն 'ի հաւատս ընկալարո՛ւք՝ մի՛ խղճիւ
երկմտութեանց :

Ոմն հաւատաց ուտել զամենայն . և որ հիւանդն է ,
բանջար կերիցէ :

Որ ուտէն , զայն՝ որ ո՛չն ուտէ՝ մի՛ անգոսնեացէ . և որ
ո՛չն ուտէ , զայն՝ որ ուտէն , մի՛ դատեսցի . քանզի Աստուծո՛ւ
զնա ընկալաւ :

Դու ո՞վ ես՝ որ դատիս զայլոյ ծառայ . իւրում տեառն
կայ՝ կամ անկանի . բայց կացցէ՝ զի կարող է Տէր հաստա
տել զնա :

Ոմն պահէ օր ըստ օրէ՝ և ոմն պահէ զօրհանապաղ .
Իւրաքանչիւք որ զիւր միտս հաճեսցէ :

Որ խորհի զօրն՝ Տեառն խորհի . և որ ո՛չն խորհի զօրն ,
Տեառն չխորհի . և որ ուտէ , Տեառն ուտէ , և դո՛հանայ
զԱստուծոյ , և որ ո՛չն ուտէ , Տեառն չուտէ , և դո՛հանայ
զԱստուծոյ :

Օ՛ր ոչ որ 'ի մէջն անձամբ կեայ , և ոչ անձամբ մե
ռանի :

Եթէ կեամք՝ տեառն կեամք , և եթէ մեռանիմք՝ Տեառն
մեռանիմք , և արդ՝ եթէ կեամք և եթէ մեռանիմք՝ Տեառն եմք՝
Քանզի 'ի նոյն իսկ և Քրիստոս մեռաւ և եկեաց , զի

մեռելոց և կենդանեաց առ հասարակ տիրեացէ :

Դու զի՞ դատիս զեղբայր քո . կամ՝ բնդէ՞ր անդոսնես զեղբայր քո, քանզի ամենեքին կալոց եմք առաջի ատենին Քրիստոսի :

Օ՛ի զրեալ է, կենդանի եմ ես՝ ասէ Տէր, զի ինձ կրկնեացի ամենայն ծունր՝ և ամենայն լեզու խոստովան լիցի Լստուծոյ :

Լսոյա ուրեմն՝ իւրաքանչիւրք 'ի մէնջ ընդ անձին համարս տացէ Լստուծոյ :

Լսյառհետե՛ մի՛ զմիմեանս դատեացուք . այլ առաւել զայս զիք 'ի մօր՝ չդնել գայթաղղութիւն եղբօրն :

Օայս գիտեմ, և հաստատեալ եմ՝ 'ի Քրիստոս Յիսուս, զի ոչ ինչ է պիղծ նովաւ . բայց այնմ, որ համարիցի որ ինչ պիղծ՝ նմա է պիղծ :

Օ՛ի եթէ վասն կերակրոյ եղբայրն քո տրամի, ոչ ևս տիրով գնացեր . մի՛ կերակրոյն քով զնա կորուսաներ, վասն որոյ Քրիստոսն մեռաւ :

Ա՛յ հայհոյեցի բարին ձեր :

Օ՛ի ոչ է արքայութիւն Լստուծոյ կերակուր և բմպելի, այլ արդարութիւն և խնդութիւն և խաղաղութիւն 'ի հոգինսս որ :

Օ՛ի որ յայտմ ծառայէ Քրիստոսի, հաճոյ է Լստուծոյ՝ և ընտիր մարդկան :

Լսոյա այսուհետե զհետ երթիցուք զխաղաղութեան, և զշինութեան՝ որ առ միմեանս :

Ա՛յ վասն կերակրոյ քակեր զգործ Լստուծոյ . ամենայն ինչ տուրք է . այլ չար այնմ մարդոյ է՝ որ խղճիւն ուտիցէ :

Եւ ասէ ուտել միս, և ոչ բմպել գինի, և ոչ որով եղբայրն քո գայթաղի կամ գթէ կամ տկարանայ :

Դու աղաքէն հաւատոս ունիս, կա՛լ առանձինն առաջի Լստուծոյ . երանի որ ոչ դատիցի զանձն, որով զընկերն փորձիցէ :

Բայց որ խղճէն, թէպէտ և ուտիցէ՝ դատաւարտեալ

է՛ զի ոչ ըստ հաւատոց, զի ամենայն ինչ՝ որ ոչ ՚ի հաւատոց է՝ մեղք են. այլ այնմ, որ կարօղն է հաստատել ըզձեզ ըստ աւետարանիս իմում՝ և ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայանութեան խորհրդոյն՝ Ժամանակօրն յաւիտենից լռեցելոյ, և յայանելոյ այժմիկ ՚ի ձեռն զրոց մարդարեւկանաց՝ ըստ հրամանի մշանջնաւորին Մատուցոյ, ՚ի հնազանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոս ծանուցելոյ՝ միայնոյ իմաստնոյն Մատուցոյ, ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս. ամէն:

Եփես. 4. ր. 1 — 6. 22 — 33.

Յորդանան է որ իրարան հեղի մէջ ըլլենք: Այս հարցը ըզգէնանք, եւ զիս Գլխոյ հոռոյ խօսելը. եւ ամէն վայր իւրոյ մեր բերնից քաւար չըգայ:

Արդ՝ ազաչեմ՝ զձեզ ես՝ որ կապեալ եմ ՚ի Տէր, արժանի գնալ կոչմանն՝ յոր կոչեցարուք,

Մենայն խոնարհութեամբ և հեղութեամբ և երկայնմտութեամբ անսալ միմեանց սիրով:

Փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յողիւխաղաղութեան:

Մի մարմին՝ և մի հոգի. որպէս և կոչեցարուք ՚ի մի յոյս կոչման ձերոց:

Մի է Տէր, մի հաւատք՝ մի մկրտութիւն:

Մի Մատուած, և հայր ամենեցուն՝ որ ՚ի վերայ ամենայնի և բնդ ամենեւին՝ և յամենեւին ՚ի մեզ:

Ի բաց մերկանալ ՚ի ձէնջ ըստ առաջին գնացիցն ըզմարդն հին՝ զապականեալն ցանկութեամբք խաբէութեանն:

Եւ նորոգել հոգւոյն մտաց ձերոց:

Եւ զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ Մատուցոյն հաստատեալ է՝ արդարութեամբ և սրբութեամբ ճշմարտութեանն:

Այս օրոյ 'ի բաց ընկեցէք զստութիւնս, խօսեցարուք զճմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում, զի եմք միմեանց անդամք:

Բարկանայք՝ և մի՛ մեղունէք. արեգակն 'ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ:

Եւ մի՛ տայք տեղի սատանայի:

Որ գողանայրն՝ մի՛ ևս գողացի, այլ մանաւանդ յաւտակեցէ գործել ձեռօք իւրովք զբարիս. զի բաւական էցէ տայ՝ ում՝ սխտոյ իցէ:

Եւ մեռայն բան տգեղ 'ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ, այլ որ ինչ բարին է 'ի շինած սխտոյից, զի տացէ շնորհս այնուցիկ՝ որ լսեն:

Եւ մի՛ արամեցուցանէք զհոգին սուրբ Եստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան:

Եւ մեռայն դառնութիւն և բարկութիւն՝ և սրտմտութիւն և սղտղակ՝ և հայհոյութիւն բարձցի 'ի ձէնջ ամենայն չարութեամբն հանդերձ:

Երո՛ւք ընդ միմեանս քաղցունք՝ գթածք. շնորհել միմեանց, որպէս և Եստուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ:

Եւսեմ. ԳԼ. Է. 21 — ԿՅԿ.

Պատարիւրամ է չափանց որ հոգւանոր ընեն իրանց հարբեբանց, և հարբեբանց որ սերեն իրանց չափանց, ինչպէս Քրիստոս սիրեց եկեղեցին:

Հնազանդ լերուք միմեանց երկիւղէն Քրիստոսի:

Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրեւ Տեառն:

Օհ այլ է գլուխ կնոջ՝ որպէս և Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, և ինքն է փրկիչ մարմնոյ:

Եւ որպէս եկեղեցին հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս և կանայք իւրեանց արանց յամենայնի:

Ա՛րբ՝ սիրեցէք զԷանայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի, և զանձն իւր մատնեաց լաւն նորա:

Օ՛ զնա սրբեայէ սրբութեամբ աւազանին բանիւ:

Օ՛ ի կացուողէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի ինչ արատ՝ կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայնպիսեաց. այլ զի իցէ սուրբ և անարատ:

Նոյնպէս պարտին արբ սիրել զԷրեանց կանայս՝ իբրև զԷրեանց մարմինս. որ սիրէ զէին իւր՝ զանձն իւր սիրէ:

Օ՛ ի մէջ սրբեցէ անուայ զանձն իւր, այլ սնուցանէ և դարմանէ զնա. որպէս և Քրիստոս զեկեղեցի:

Օ՛ ի անդամք եմք մարմնաց նորա, ՚ի մարմնաց նորա և յոսկերաց նորա:

Վասն այսորիկ Թողցէ այր զՀայր և զմայր իւր, և երթիցէ զՀետ կնոջ իւրոյ, և եղեցին երկոքին ՚ի մարմին մի:

Իսորհուրդս այս մեծ է՝ բայց ես ասեմ ՚ի Քրիստոս և յեկեղեցի:

Այլ և դուք նոյնպէս մի ըստ միովք. զի իւրաքանչիւր սր զԷր կին այնպէս սիրեացէ՝ իբրև զԷր անձն. և կին երկընչեցի յառնէ իւրմէ:

Եփե. 4Լ. 2. 1 — 11.

Պատուիրում է պատուել որդւոց՝ երանց ծնողաց. ծնողացը՝ սիրել երանց որդւոց. ծառայելն երանց հորհրատար պէրանցը. և Տէրերն՝ որ երանց ծառայից հեղ գլխաւեամբ վարելն:

Ո՛րդեք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց ՚ի Տէր. զի այն է արժանն:

Պատուեալ զՀայր քո և զմայր, որ է առաջին պատուելուն յաւեախնս:

Օ՛ թեղ բարեւ եղեցի, և երկայնակեաց լինիցիս ՚ի վե-

րայ երկրի:

Հարբ՝ մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, այլ անուցա-
նիջէք զնոսա խրատու և ուսմամբ Տեառն:

Օսանայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւո-
րաց, ահիւ և դողութեամբ և միամտութեամբ սրտից ձե-
րոց՝ որպէս և Քրիստոսի:

Մի՛ առ ականէ ծառայել իբրեւ մարդահաճոյք. այլ իբրեւ
ծառայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ:

Սրտի մտօք ծառայել իբրեւ Տեառն, և մի՛ իբրեւ մարդկան:

Ղիտասցէք՝ թէ՛ իւրաքանչիւրօք որ զինչ առնէ զբարին,
զնոյն ընդունի և ՚ի տեսանէ՝ և թէ՛ ծառայ և եթէ օգտաւ:

Եւ դուք տեսցէ՛ զնոյն առնիջիւք առ նոսա. ներելով
առնել զպատուհասն. զիտասցէք թէ՛ և նոցա և ձեր Տէր
գոյ յերկինս. և ակնառութիւն ոչ գոյ առաջի նորա:

Այսուհետեւ զօրացարհէք Տերամբ և կարողութեամբ
զօրութեան նորա:

Եւ զգեցարհէք զսպառաղինութիւնն Աստուծոյ, զի կա-
րօղ լինիջիւք կալ ընդդէմ հնարից սատանայի:

Եբրայ. 41. ԺԷ. 5 — 915.

Հասարակ Համբերութեան և Աստուծոյաշուքութեան ճշտ Հասարակ
Ծառայութեան յորդորանք:

Որդեակ իմ՝ մի՛ լքանիր ՚ի խրատու Տեառն. և մի՛ վը-
հատիցիս՝ յանդիմանեալ ՚ի նմանէ:

Օ՛ի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝
զոր ընդունի:

՚ի խրատու համբերութեան կայք, իբրեւ յորդիս մա-
տուցեալ է. ՚ի ձեզ Աստուած, որ որդի է՝ զոր ոչ խրատի-
ցէ հայր:

Օ՛ի եթէ առանց խրատու լինիցիք, որո՛ւլ ամենեքին բա-
ժանորդք եղեն. ապա խորդք իցէք՝ և ո՛չ որդիք:

Օ՛ի եթէ ՚ի մարմնաւոր հարցն մերոյ՝ զոր ունիմք խը-
րատիչս՝ պատկառեմք, որչափ ևս առաւել հնազանդեացուք
հօրն հոգւոյ՝ և կեցցուք:

Օ՛ի սորա առ սակաւ ժամանակս ըստ կամաց իւրեանց
խրատեն: Իսկ նա վասն օգտի, առ ՚ի ընդունելոյ զսրբու-
թիւն նորա:

Ի՛մենայն խրատ առ ժամանակն ո՛չ ուրախութեան
թուի՝ այլ տրտմութեան. բայց յետոյ պտուղ խաղաղու-
թեան նովաւ կրթելոցն հատուցանէ յարդարութիւն:

Վասն որոյ զձեռս լքեալս՝ և զծունկս կթոսս հաստա-
տեցէք:

Եւ զչաւիղս ուղիղս արարէք ռտից ձերոց, զի մի՛ որ
կաղն իցէ՝ գլորիցի, այլ մանաւանդ բժշկեցի:

Օ՛խաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեւին և ըզ-
սրբութեան. առանց որոյ ո՛չ որ տեսանիցէ զՏէր:

Օ՛զոյշ լերուք՝ գուցէ որ յետնեալ գտանիցի ՚ի շնոր-
հացն Մարութոյ, մի՛ որ արմատ դառնութեան ՚ի վեր երե-
ւալ նեղիցէ, և նովաւ բաղումք պղծիցին:



Յանվ. 41. Բ. 1 — 20 — 26.

Քրիստոնէութեան մէջ պէտք է որ հարստային պարիս ասն եւ ազ-
գային անարգէն: Պէտք է մշտ ողորմութեան օրէն. հարստային ասանց
գործոյ մեղաւոր է:

Եղբարք իմ, մի՛ աչառութեամբ ունիցիք զհաւատսն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ Տէրն է վառաց:

Եթէ մտանիցէ ՚ի ժողովուրդ ձեր այր՝ որ ունիցի մա-
տանի ոսկի և հանդերձս պայծառս, մտանիցէ անդր և աղ-

քատ որ՝ ՚ի հանդերձս աղտեղիւ :

Հայկիցիք ընդ այն՝ որ ունիցի զհանդերձսն պայծառս ,
և ասիցէք՝ եթէ դու նիստ աստ պատուով : և ցաղքասն ա-
սիցէք՝ եթէ յասն կաց դու այտի : կամ՝ թէ եկ նիստ աս-
պատուանդանիս իմում :

Ոչ խղճիցէք յանձինս՝ և լինիցիք դատաւորք չարեացն
խորհրդոց :

Ուարժք ինձ եղբայրք իմ՝ սիրելիք , ոչ ապաքէն լի-
տուած՝ ընտրեաց զաղքատս աշխարհիս , որ են մեծատունք
հաւատովք , և ժառանգաւորք արքայութեանն՝ զոր խոտա-
ցաւ սիրելեաց իւրոց :

Եւ դուք անարգէք զաղքատս , ոչ մեծատունքն յաղ-
թահարեն զձեզ՝ և նորս քարշեն զձեզ ՚ի դատաստան :

Ոչ նպրա հայհոյեն զբարւոր անունն՝ որ կոչեցեալ է ՚ի
վերայ ձեր :

Լիա թէ զօրէնսն կատարիցէք զարքունականս ըստ գը-
րոց , եթէ սրբեացես զընկեր քո իբրեւ զանձն քո , բարւոր առնէք :

Իսկ եթէ աչառիցէք , մեղս դործէք՝ յանդիմանեալք
յօրինացն իբրեւ օրինազանցք :

Որ որ զամենայն օրէնսն պահիցէ , և միով իւրք ինչ
գթիցէ , եղև ամենայն օրինացն պարտապան :

Օհ որ ասացն՝ թէ մի՛ սպանանիցես , ասաց թէ և մի՛
շնայցես . զե եթէ սպանանիցես ո՛չ՝ բայց շնայցես , եղև
յանցաւոր օրինացն :

Լիալէս խօսեցարուք՝ և այնպէս արարէք , որպէս զի ա-
ղատութեան օրինօրն իցէք դատելոց :

Օհ անողորմ դատաստան լինելոց է այնմ , որ ոչ առ-
նիցէ զողորմութիւն . քանզի բարձրագլուխ պարծի ողորմու-
թիւն աս դատաստանաւն :

Օրինչ օգուտ իցէ եղբայրք իմ , եթէ ասիցէ որ հա-
ւատս ունեկ՝ և գործս ո՛չ ունիցի . միթէ կարիցեն հաւատքն
ապրեցողսնեկ զնա :

Եթէ եղբայր որ կամ քոյր՝ իցեն մերկ կամ կար-

տեալ աւուրն կերակրոյ,

Եղիցէ որ ՚ի ձէնչ ցնտաւ, երթալք խաղաղութեամբ,
ջեռարձէք և յագեցարձէք. և տայցէք ո՛չ նոցա զպէտս մարմ-
նոյն, զի՞նչ օգուտ իցէ:

Սոյնպէս և հաւատք եթէ գործս ո՛չ ունիցին, մեռեալ
են առանձինն:

Եւ թերեւ ասիցէ որ, եթէ դու հաւատաս ունիս՝ և
ես գործս ունիմ. ցոյց ինձ զհաւատան քո առանց գործոց,
և ես ցուցից քեզ ՚ի գործոցն իմոց զհաւատաս:

Դու հաւատաս՝ զի մի է Բնութեամբ, բարեք առնես.
և դէք հաւատան՝ և սարսեն:

Կամի՞ն գիտե՛լ ո՛վ մարդ սնտալի, զի հաւատք առանց
գործոց դատարի են:

Օր օրինակ մարմնն առանց հոգւոյ մեռեալ է, սոյն-
պէս և հաւատք առանց գործոց մեռեալ են:

ՅԷՆ. ԳԼ. Բ. 1 — 12. 15 — 16 — 17.

Միեկարամ է պէտքաւիճանալ մեզք անաշներին. սովբեցնամ է լե
ճշմարտապէս Բնութեամբ ճանաչելն՝ նրա պատուիրանները պահելն է և
մեր եղբարցը սիրելը:

Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ մեղիցէք, և եթէ
մեղեցէ որ, ունիմք բարեխօս առ Բնութեամբ զՅիսուս Քրի-
ստոս զարդարն՝ և զանարտն:

Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց. և ո՛չ եթէ մե-
լոցն մկայն՝ այլ և ամենայն աշխարհի:

Եւ յարմիկ գիտեմք՝ եթէ ծանեայք զնա, եթէ զպա-
տուիրանս նորա պահիցեմք:

Որ ասիցէ՝ եթէ ծանեայ զնա և զպատուիրանս նորա
ո՛չ պահիցէ, սուս է՝ և ճշմարտութիւն ՚ի նմա ո՛չ գոյ:

Իսկ որ պահեցէ զբան նոր, արդարեւ ՚ի նմա կատարեալ է սէրն Լ'ստուծոյ, այսուիկ ճանաչեմք՝ եթէ ՚ի նմա եմք :

Որ ասիցէ ՚ի նմա բնակել, այնպէս պարտի զնալ՝ որ պէս և նայն զնաց :

Արեւելք՝ ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ ձեզ, այլ զՏին պատուիրանն՝ զոր իսկզբանէ ունէիք. և հին պատուիրան՝ բանն է զոր լուարուք :

Քարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ՝ որ է Ճմարտիւ ՚ի նմա և ՚ի ձեզ. զի խաւարն անցանէ, և լոյսն ճըմարտ արդէն իսկ երևի :

Որ ասէ եթէ ՚ի լոյսն իցէ՝ և զեղբայր իւր ատիցէ, սուտ է՝ և ՚ի խաւարի է տակաւին :

Որ սիրէ զեղբայր իւր, ՚ի լոյս բնակէ՝ և գայթաղղութիւն ՚ի նմա չիք :

Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ ՚ի խաւարի է, և ընդ խաւար շրջի. և ո՛չ գիտէ յո՛ր երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա :

Այլ սիրէք զաշխարհ՝ և մի՛ որ ինչ յաշխարհի է :

Եթէ որ սիրէ զաշխարհ, ո՛չ է ՚ի նմա սէր հօր. զի ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ, և ցանկութիւն է աչաց, և ամբարտաւանութիւն ատրի կենացս. որ ո՛չ է առ ՚ի հօրէ՝ այլ յաշխարհէ աստի է :

Եւ աշխարհս անցանէ՝ և ցանկութիւն նորա, իսկ որ առնէ զկամս Լ'ստուծոյ՝ մնայ յաւիտեան :

Յովն. 4Լ. 4. 15 — 24.

Լ'ստուծոյ Տեղ շնորհած սիրոյ վրա : Այս պատուիրանները պահելու, և իրարու եղբօր պէս սիրելու վրա :

Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է. և գիտէք՝ զի ամենայն մարդասպան ո՛չ ունի կեանս յաւիտեան :

տենականս յանձին հաստատեալ :

Այսուիկ գիտացաք զսէրն Աստուծոյ . զի նա զանձն իւր եղ լիսան մեր . և մեր լիսան եղբարց մերոց պարտութք գնել զանձինս :

Որ ունիցի զկեանս ինչ զաշխարհիս՝ և տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք՝ և միակիցէ զգութիւն իւր առ 'ի նմանէ, զեւրդ սէրն Աստուծոյ 'ի նմա իցէ բնակեալ :

Որ գեակք՝ մի՛ բանիւք և լեզուօք սիրեսցուք, այլ արդեամբք և ճշմարտութեամբ :

Եւ այսուիկ լիցուք ծանուցեալք՝ եթէ 'ի ճշմարտութենէ անտի իցեմք . և առաջի նորա արասցուք հանդէս սրտից մերոց :

Եթէ ստգտանիցեն զմեզ սիրտք մեր՝ այլ Աստուած մեծ է քան զսիրտս մեր՝ և գիտէ զամենայն :

Արեւիք՝ եթէ սիրտք մեր զմեզ ո՛չ ստգտանիցեն, համարձակութիւն ունիմք առ Աստուած :

Եւ զոր ինչ հայցեմք, առնումք 'ի նմանէ . զի զպատուիրանս նորա պահեմք, և զհաճոյս առաջի նորա առնեմք :

Եւ այս է պատուիրանս նորա, զի հաւատասցուք յանուն որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և սիրեսցուք զմիմեանս, որպէս և ետ մեզ պատուէր :

Եւ որ պահէ զպատուիրանս նոր, 'ի նմա է հաստատեալ՝ և նա 'ի սմա . և յայսմանէ գիտեմք եթէ բնակէ 'ի մեզ 'ի հոգւոյ անտի՝ զոր ետ մեզ :

Յովհ. 4Լ. Դ. 7 — Կ21 :

Եղբայրանս սիրոյ լիս :

Արեւիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱստուծոյ է . և ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է ծնեալ և ճանաչէ զԱստուած :

Եւ որ ո՛չն սիրէ՝ ո՛չ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է :

Եւ զի յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ՝ ի մեզ, զի զորդին իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նոյաւ կենդանիք։

Յայսմ է սէրն. ո՛չ զի մեր սիրեցաք զԱստուած՝ այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց զորդին իւր՝ ի քառութիւն մեզաց մերոց։

Արեւելք՝ եթէ Աստուած այնպէս սիրեաց զմեզ, ապա և մեր պարտինք զմիմեանս սիրել։

Օ Աստուած ուրուք երբեք չիր տեսեալ. եթէ սիրեացուք զմիմեանս՝ Աստուած ՚ի մեզ բնակի, և սէր նորա ՚ի մեզ կատարեալ է։

Այստիկ զխտեմք, եթէ մեր ՚ի նմա բնակեալ եմք՝ և նա ՚ի մեզ, զի ՚ի հոգւոյն իւրմէ ետ մեզ։

Եւ մեր տեսաք՝ և վկայեմք զի հայր առաքեաց զորդին իւր վրկիչ աշխարհի։

Որ որ խոստովանեցի՝ եթէ Յիսուս է որդի Աստուծոյ, Աստուած ՚ի նմա բնակի՝ և նա յԱստուած։

Եւ մեր հաւատացաք՝ և ծանեաք զսէրն Աստուծոյ՝ զոր ունի առ մեզ. Աստուած սէր է, և որ կայ ՚ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, և Աստուած ՚ի նմա բնակի։

Յայսմիկ կատարեալ է սէրն նորա ՚ի մեզ. զի համարձակութիւն ունիցինք յաւուրն դատաստանի. զի որպէս և նայն է՝ նոյնպէս և մեր եմք յաշխարհի յայսմիկ։

Երկիւղ ո՛չ դոյ ՚ի սէր, այլ սէրն կատարեալ ՚իւրաց մեր՝ ժէ զերկիւղն. զի երկիւղ ընդ տանջանօք է. իսկ որ երկնչին, չէ կատարեալ ՚ի սէրն։

Այբ սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ։

Եթէ որ ասիցէ՝ եթէ սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր ասիցէ, սուտ է. որ ո՛չ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ, զԱստուած զոր ո՛չն ետես՝ զեմրդ կարիցէ սիրել։

Եւ զայս պատուէր ունիմք առ ՚ի նմանէ, զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր։

Ա՛ն փրկէ՛ն Յիսուս:

Ահր անուն Յիսուս

Ահրով քո ճմլեա՛ն

Ահրտ իմ քարեղէն:

Ա՛ն ան գթութեան

Ա՛ն ողորմութեան

Ա՛ն երստին կեցո՛ւ:

Տենչալոյդ տեսեամբ

Տո՛ւր ինձ յագենալ

Տէր Յիսուս Քրիստոս:

Բաբունդ երկնաւոր

Բոտեա՛ զաշակերտս

Բամից երկնայնոց:

Յօղ արեան քո Տէր

Յօղեա՛ն ՚ի հողիս

Յնծասցէ՛ անձն իմ:

Ի՛նծեալս մեղօք

Ի՛նծեալ աղաչեմ՝

Ի՛նտեղ ինձ բարի:

Փրէիչ բոլորից
Փութա՛ զիս փրկել
Փորձութեանց մեղաց:

Քաւիչ յանցանայ
Քաւեա՛ զօրհնաբանս
Քեզ երգել զփառս:

Երգ.

Մայր իմ:
Երբ ծնայ յաշխարհ՝ ո՞ր զիս դիեցոյց,
Երբ մերկ երեխայ՝ ո՞ր զիս զգեցոյց,
Եւ երբ անլեզու ո՞ր խօսիլ ուսոյց:

Մայր իմ:
Երբ 'ի խանձարուքս՝ տղայ դիեցիկ,
Ո՞ր զօրօրոցի՛ երգեաց՝ զերգ քաղցրիկ
Եւ ո՞ր մեղմ՝ ասաց՝ լուր ննջեա՛ մանկիկ,

Մայր իմ:
Երբ հիւանդացայ՝ ո՞ր ետ ինձ զգեղ,
Եւ զայն գեղ մեղերե՛ ո՞ր արար համեղ,
Եւ զթոյլ ոտս իմ՝ ո՞ր արար ուժեղ,

Մայր իմ:
Երբ խառ երեխայ՝ գրոց անընտել,

ո՞ր ուսոյց զիմ միտս՝ զԼստուած ճանաչել,
և զանճառ անուն՝ իւր փառութեւ,

Մայր իմ:

Օ իմ պանդխտութիւն՝ յաստիս ո՞ր եցոյց,
զապականութիւն՝ մարմնոյս ո՞ր ուսոյց,

և զանմահութիւն՝ հոգւոյս ո՞ր ծանոյց,

Մայր իմ

Լպա պարտ է ինձ դքեղ միշտ սիրել,
'ի քում ծերութեան՝ քեզ քանջ ծառայել:

և զԼստուածային՝ պատգամս կատարել,

— —

Կեանք:

Ձեր առօրեայ, ձեր հրաշալի,

Կեանք դու, վասն էր ինձ տրուար:

Միտք իմ լռեն՝ սրբոյս յոյանի —

Կեանքդ ընդ կենաց շնորհեցար:

Օ որ ինչ Յաւերժն լատեղճ բանիւ

Համակ բարի է՝ աղնիւ,

Օ ի դործ մատանցն աշխարհ, երկին:

Ողջ 'ի նորա են ձեռին:

Թէ քոյդ կենաց ընըպատակ
Յանկա գիտել խկապէս —
Ծանիր զԼստուած՝ զվէ՛ն հակ,
Նովա յաւերժ դու կեցցես:

— — —
Լիւր՝ պոռոյ:

Տէր, ես մանուկ եմ տըկար,
Օջնե վըտանդք են անթիւ,
Դու զիս պահեա՛, բարերար,
Լու իս լէր միշտ քաջ հովիւ:

Լիմիդ կոչեն զիս տըղայ,
Գըգուեն գովեն ՚ի խրախոյս
Բայց ես գիտեմ, զի մեղայ,
Ներեա՛ վրկիչ իմ Յիսուս:

Ո՛վ Տէր, ահա գայլ անդուծ
Յար ինձ, ասեն, դարանի,
Ո՛րք դառինա վայր անքոյթ,
Բայց ՚ի ճոցիդ տէրունի:

Լ. զօրէ՛ Գողթնի զարկեալէ լոյ՛:

Ո՛վ հայր, զքեզ իմրա պաշտէ հայր
Քեզ ծուներ ածէ մահացուն:
Քաղցր և ահեղ անուանդ իմ մայր
Երկըրպագէ եռանդուն:

Եսէն թէ այս արեգ պայծառ
Խաղ իմն է քո առաջի,
Եւ ընդ ոտիւք քոյին անձառ
Իբր ըղկանթեղ առատանի:

Եսէն թէ դու և ճընճըղկանց
Տաա՛ ՚ի դաշտի ծընանել,
Եւ աղարծի մանրիկ մանկանց
Հողի՛ ըզքեզ ճանաչել:

Եսէն թէ դու ես որ պըճնես
Ըզ բուրաստան ծաղկաւէտ,
Եւ ո՛չ առանց քո տայ պարտեղ
Եկտրժ պըտուղս ՚ի մեր պէտ:

Դ քո պարգեւը տիեզեցք

Եւ հասարակ վայել են,
 Եւ ոչ զեռուն զըրկի երբէք
 Յայսմ 'ի բնութեան խրախճանէն:
 Գառն իւր արօտ տունու զծովին,
 Ուն 'ի ցըրդին ձրգտի գիւտ,
 Ճանճ 'ի շըրթունքս պընակին
 Օխոյ կտմին ծըծէ հիւթ:

Ձամբ արտուալին ետուր ըզկուտ
 Օր սերմանող տայ հողմոց,
 Ճընձղուկ 'ի կալ դիմէ անձկուտ,
 Տըզայն 'ի մօրն իւր 'ի ծոց:

Եւ իւր առնումք օր ըստ օրէ
 Օանհատական քո պարգևս,
 Եւ յգուն ցերեկս 'ի մեջօրէ
 Եւ ղերսելով ցանդ ըզքեղ:

Եւ ատուած, և ես թոթով 'ի բան
 Կարգամ զանունդ ահաւոր,
 Բարէ և ձայն տըխեղձ մանկան
 'ի նուաղ խառնի երկնաւոր:

Լսեն թէ դու Տէր ակօրժես
Օղերս անդօր մանկըտոյն,
Օի պարզամիտք են քաղցր և հեղ,
Թեպէտ 'ի միտ ոչ առնուն:

Լսեն թէ մեր պաշտօն խոնարհ
Քեզ հեշտալուր ընծայի,
Եւ թէ զուարթնոց յերկինս է պար,
Եւ մեր հրեշտակք եմք յերկրի:

Օն թէ լըես յայնչափ բարձանց
Օւխտ մեր սրբոց եռանդուն,
Ես հայցեցից ջերմ 'ի Թախանձ
Օտեղերաց պէտս համբուն:

Տուր տէր աղբերց յըստակ զջուր,
Եւ ըզփետուր ճրնճըղկին,
Գառանց գրգաթ սուրբ և մաքուր,
Դաշտաց ըստուեր ցօղաղկին:

Տուր հիւանդին բրժըշկութիւն,
Եւ մուրացկին հաց յաղուրդ,
Տուր բնակարան ողորմ օրբոյն,

Եւ դերեւոյ արձակուրդ:

Բաղձածքնունդ արա՛ զտուն

Հօր առ 'ի քէն երկիւղած:

Տուր ինձ լինել զդօն և խմաստուն,

Եւ մայրս իցի անկասկած:

Ուշիմ՝ եղեց, Թէ և արհաւ,

Եւ յն տաճարի մանկան պէս,

Եւ յգուն այգուն զոր 'ի սրնարս

Մաճիլս դիտեմ՝ բերկրատես:

Օ արդարութիւն տընկեա՛ յոգիս,

Որմարտութիւն 'ի շրթունա:

Պըտղաբերցի բանդ 'ի սըրտիս

Օ երկիւղ ըզբարբս քաղցունա:

Եւ քաղցրասցի քեզ իմ՝ բարբառ

Իբրեւ ըծուին այն դիզան,

Յանուշահօտ զոր 'ի բուրվառ

Ոճէն արդայք ինձ նըման:



ԼՈՒԿԱ

ԼՂԵՆ և ԽԿԱՂԱՂ:

Սուլարըլուկ լեալ աղուէս,
Բնդոտա 'ի վեր ուժգնապէս
Բարձր 'ի յայգւոջ խնդրէր ճիւղ,
Եւ անհաս յիւրն 'ի խրնդիւր,
Կացեալ անտի 'ի բացեայ
»Չե է հատեալ, ասէ, դա.
Չիամիմ առնուլ 'ի ճաշակ
»Օղիւղդ դայդ գեռ ըղխակ:
Ուր անդոտներն բանիւք
Յոր ողն գոն ձեռնհաս,
Լնձանց իւրեանց առ 'ի խրատ
Համարեցին զառակս զայս:

ԳԱՅԼ և ՀԱՆԼԵ:

ԳԱՅԼ քանասոր ալեօր
Ի սպանդ գառանց լեալ անդօր,
Եղդ զայս առնէր առ հովիւ
»Եհա խոնարհ բեկ սրաիւ
Եւ զղջանամ 'ի մեղաց,
Ոչ ես առնեմ չար խաշանց
Բայց դիւր ընդիս գու պայման
Կարգել ինձ դոյղն ինչ դարման,
Եսէ հովիւն իմաստուն,
»Եղէ հարցէք ծեր դայլուն,
Օր չեղեն բանք այդպիսիք
Սինչ ողջ էին քո ժանիք:

Աւերի և հալ:

„Ո՛ր շրջմովի սատան չար,
Տերբ լըկեցես զեղկելիս,
Եւք ալիւր վըշտահար
Եւ մաղն 'ի դառն լալիս,
Եւ զայս ցալիւր մաղն ասէր.
„Բայց լըկելով և մարրիս,
Մի՛ դու զքըննիչդ անգամներ
Թի՛ լաւանալ կամիցիս:

Դան և Սողաւեր իւր:

Եւ լազանց տենչ զայր ագահ
Եւնի 'ի խաբբս դիւրասահ.
Յինչս օտարին որկորուստ
Քիւրքն մատնի 'ի կորուստ:

Բնդ գետ 'ի լող տնկեալ շուն,
Սիս 'ի բերան յիւր 'ի չուն,
Յառեալ ետես զըստուեր իւր
Ի հայեւոջ անդ 'ի ջուր.
Եւ համարեալ այլ իմն որս
Յորկոր այլոյ ջուրցն 'ի խորս,
Գրաւել և զայն ցանկացաւ.
Եւ յանկուծիւնն ինքնադաւ
Ի կը զոր ունէքն 'ի բերան,
Եւ ոչ միւսումն ժաման:

Քաղաքացի Սոսն եւ Կաշպեցի :

Քաղաքացի մուկն աղնիւ
Բնդեւական հեշտ բանիւ
Օգեղջուկն 'ի տուն հրաւիրեաց
'ի ճաշկերոյթ վերջանաց :

'ի կապերտի պարսկական
Ճաշք համադամ սրժուեալ կան .
Ոհ քաղցրութեանն՝ յոր անդէն
Սերտ բարեկամք վայելեն :

Իջր անթերի այն ըսպաս,
Եւ չէր խորտիկ ինչ պտկաս .
Եւ վաղ էարկ անդ ժրխոր
Ոմն արտաքուստ եկաւոր :

Քանզի առ դուրս տաճարին
Յարեաւ շրջինդն ահագին .
Խոյս ետ 'ի ծակ կոչնատէրն,
Եւ հիւրն զհետ մըտանէր :

Ի ըսեաց շրջուկ, ոչ ոք է .
Սըկունքն ելին 'ի ծակէ .
Եւ կոչողն հիւրասէր,
'ի ծակ բազմեսցուք 'ի ճաշ մերի , ,

,, Եւ տէ, ասէ, դաշտեցին,
Եւ դու վաղիւ 'ի տուն իմ .
Թէ և իմ սէր աղքատին
Օրնչ առ կոչնովքդ քոյին :

Եւ իմ անդորր է սեղան,
Յոր վայելիմ անխափան .
Եւ յն ըղբօսանք քաւ յինէն,
Օր ահ 'ւ երկիւղ շրջութեն , ,

ԼՅՆ Խ ՍԻՄԻ:

ԼՅՆ սոխակի պատահեալ
 ,,Բզբէն, ասէ, այլ ընդ այլ

Օ ըրոյց անբաւ

Յարդ ընթացաւ,

Թէ ես երգիչ քաջուր .

Ե՛յլ դիւրհաւան ես ոչ եմ

Սինչեւ ունիամբս իմ լըսեմ .

Դու ինձ հապա

Երդ ինչ ասա,

Տեսցուք իցէ՛ դաշնաւորս ,,

Յայնժամ սոխակ հրաշապէս

Յիւր մըխեցաւ 'ի հանդէս՝

Ուսնոյր՝ փափաւի գեղգեղէր,

Բիւր դայլալիկս յօրինէր .

Պարզեալ բղձայնն և գեւջը,

Հընչէր հովիտ և բըլուր .

Ե՛յն այգածնին

Ե՛յն երգեցիկն

Բնութիւնք համայն կան 'ի լուր:

Հողմք լըռեցին, հաւուց պարք,

Սակաղեցան և ոչխարք .

'ի հաւն հարեալ զայս հովիւ,

'Նորին գերեալ էր ձայնիւ .

Լըռեաց թըռչուն,

Լըռէր բնութիւն,

ԼՅՆ եւս պատգամ սուղ բանիւ .

,,Օ ըրոյցքն՝ այժ, են արդար,

Եւ չէ տաղտուկ քոյդ բարբառ .

Ե՛յլ լինէիր դու քաջուր

'ի նուագ երգոց բաղմահիւս,

Թախ վարժէիւր
 Առ ոտս ընտիր
 Աքաղաղի մէր տեղւոյս : , ,

Լուեալ զլըճիւ զայս անկարծ՝
 Թաքուեալ սոխակ քաջ 'ի բայ :

Կ' տար և զմեզ՝ զՎ Աստուած,
 Ի ճեռս անմիտ դատողաց :

Թառնայի եւ Ախալալ :

Հատախօս թու թախ
 Ասէր ջըխօնակ
 Որ մարեաց 'ի պար
 Ճեմէր ճոխաբար .
 “ Յերբ տաղաուկ 'ի ճայն
 Բընայն կրրինեւ բան ,
 Յայգուէ ցերեկոյ
 Օքոյդէ հաւանքիկ :
 Ես գունակ գունակ
 Լեզուաց եմ գիտակ .
 Եսսիմ գաղղերէն
 Եւ անգղիերէն .
 Իսկ դու զքո նըւագ
 Ճանաչես միակ ,
 Եւ թէ քաջ՝ երկու .
 Կ' ինչ ինչ ինչ ինչ ինչ :
 Կրրինեաց և խօսնակ
 Աղբէն առ թու թախ .
 “ Բզոն քան ըզբեզ ,

Ոչ ուսանիմ ես
 Օտարին բարբառ,
 Իմոյս կամ պատկառ.
 Եւ ինձ բան զոչ քոյս
 Իմ չեմ չեմ չեմ չեմ չեմ,
 Պըճնող պատանի,
 Բզբէն բան լընի
 Թէ խօսիս դու յար
 Ի լեզուս օտար,
 Իսկ բղմեր բարբառ
 Ոչ գիտես 'ի սպառ.
 Ուսիր լաւ քոյքո
 Եւսիս չեմ չեմ չեմ չեմ,

Եւ լընալիս

Ո՛ր վըտակ վըտակ,
 Մի' այդպէս փութով
 Բնթանար 'ի ծով.
 Կայ 'ի քոյդ յատակ:
 Եւ դ' ալիք վըճիտ
 Օտրկիր առողեն,
 Բեզ ահաբիւռ չեն
 Սէմք և խորափետ:
 Եւ դ' քոյին վիժակ
 Մօտ յաղըերակունս
 Յունկն ամենեցունց
 Բաղցր է ուախորժակ:
 Ո՛ր վըտակ վըտակ,
 Մի' այդպէս փութով
 Բնթանար 'ի ծով.

Կայց 'ի քոյդ յատակ,
 Թէ գետք ուղեաջուր
 Օքեղ 'ի ծոց առնուն,
 Կապտեն և զանուն
 Եւ զխոյլդ երկնատուր:
 Ի բանա ու'ի կապանս
 Ընդ նոսին ճըգիս,
 Եւ կամ զեղանիս
 Յօտարին վընաս:
 Ո՛վ վատակ վրտակ,
 Ս'ի այդպէս փութով
 Ընթանար 'ի ծով:
 Կայց 'ի քոյդ յատակ:

Եւ քեղ են իմ բանք
 Որ նըմանագոյն
 Օտուին կարկաջուն
 Ի ներես զօրինակ:
 Եւ թէ տարադէմ
 Սաղեցես յանկարծ
 Քան զո՞ք քոյին հարց,
 Եւ առ քեղ ասեմ:
 Ո՛վ ժիր պատանեակ,
 Ս'ի այդպէս փութով
 Ընթանար 'ի ծով:
 Կայց 'ի քոյդ յատակ:

Եղգային Երգ:

Ախանս քեղ Հայոց խեղճիկ Ժողովուրդ,
 Յերուցան ելար անմեղ անխորհուրդ,
 Պերի գնաման օր դէպ 'ի Խորատան,

Քաղցած ու ծաբաւ, տկլոր Թշուառական:

Խարլիւր ու խաղար ցաւի դիմացաբ,
Չեր քաղցրիկ երկրէն ոտ դուրս չըդրաբ,
Խիմի ձեր խօր մօր գերեզման Թողար,
Տըներն ու ժամը ուրիշէն տուաբ:

Ես սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղքերն,
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն դեղերն,
Ումն աբ Թողման դուք որ դնաման աբ,
Եսպէս կըլնի որ մոռանում աբ:

Ախտում ամ կնպէս մօքերնուդ ընկնի,
Խնջան որ ողջ աբ՝ մօքներնուդ չընկնի.
Բարի ձեր որդւոյ Թուանոյ պատմեցէր,
Եսպէս խայրենիքն քանդած Թողեցիք:

Մասիսի անունն, Նոյայ տապանի,
Երարատ դաշտի, սուրբ Լճաճանի,
Մեր Խոր վերապի, սուրբ Պեղարդ, Մուղնի,
Չմոռանան մինչ ի օրն դատաստանի:

Աչքս կուրանար, շէնքս կտորուցէր,
Խեղճ Հայաստան, քեզ էսպէս չըտանէր,
Թի մեռած էի, ինձ երանի էր,
Քան Թի կենդանի՝ աչքս բայ տեսնէր:

* Եւս երբէ շարադրողն է Ստեփան Վարդապետ՝ Նախալճայի մանկից:
Ուր Հայոց Պարտէսական իշխելու Վրո՝ 1605ին, Պարսկոյ Շահա-
բու լազուարի հրահանուաբ:

Արար և Ստեղծ:

Եւ ծիւ ոսկիէ վարդի թերթերն,
 Որպէս և ասն նախնի ծերերն
 Լճա մերձեցաւ գարնան ջերերն
 Լճուշ օրերն
 Գեղգեղեալ գոչէ կանչէ հառաչէ
 Պիւլպիւլն երամով երամով իւրով:
 Չաւ չաւ թեւերն սգով 'ի սէր տարածեալ
 Ողբով և կոծով չ'եղև շատացեալ,
 Ի վերայ վարդին կարօտահարեալ
 Եւ սիրով վառեալ: Գեղգեղեալ Լայն
 Ծաւ ծաւ թերթերուն վարդին թերաբաց
 Հեղու զարտասուռ նման աղբերաց,
 Ծննել և հանգչել նա ըստ օրինաց
 Երբեք ոչ գիտաց: Գեղգեղեալ Լայն
 Քիւ քիւ քայլելով և ոստոսակելով
 Եւրջ ըզվարդենեօք շրջե ողբալով,
 Ի ծաղեւ լուսնոյն երգս յօրինելով
 Քաջ յարմարելով: Գեղգեղեալ Լայն
 Չիւ չիւ երամոց սոխակաց հաւուց
 Եւ հաս հովանի 'ի յասոց թաւուց,
 Գաշտք նմանեցան բարեբեր նաւուց
 Ի թուման հաւուց: Գեղգեղեալ Լայն
 Չիւ չիւ ձայներով համեղ տաղերով
 Գինին սառուցէք փայլուն պողերով,
 Վարդն գնչեցէք թօի թօթ շաղերով
 Պատ պուտ ցօղերով: Գեղգեղեալ Լայն
 Գիւլ գիւլ վայրերն և լիւ լիւ տեղեր,
 Գաշտք և առապարք բլուրք և հովիտք,
 Օարդարեալ ցնծան և համայն լերինք
 Երբեմք և վերինք: Գեղգեղեալ Լայն

ՔՐԼ քՐԼ վարդենեաց 'ի յոստոց ծայրէ
 ԾՈՒԼ ծՈՒԼ Թռչոտի 'ի վայր 'ի վայրէ.
 ՔՐԼ քՐԼ արտասուօք ըջտիւսն իւր այրէ,
 Ի վշուտ վայրէ: Գեղգեղեալ և այլն:

Երբ Բօր 'ի վերայ Բանին անջէլոյ:

Հանդեր մանուկս աչօք վըճիտ
 Հանդեր անոյշ յօրօրոցիդ:
 Այդ հրաշագեղ գոհար բրբունք
 Ի յարթնութեանդ միշտ երեւունք
 Ո՛հ զե՛ խաղաղ և անշարժիկ
 Փակեալ 'ի նինջ են աւասիկ.
 Շքթունքդ շուշանք լըցեալ շաղով
 Եւ գերդ մարմինդ երկնից գեղով:
 Ննջեա՛ մանուկս աչօք վըճիտ
 Ննջեա՛ յանդորը յօրօրոցիդ:
 Յօղն 'ի վերայ վարդին Թերթից
 Իմ ցօղ աչաց վառ վառ այտիցդ
 Թշուառ մանկիկ, քեզ մօր միակ
 Ո՛հ անժըպիտ են գորովանք,
 Օուրի 'ի նազուկ յայս տիս ամբիծ
 Հօր կաթողին 'ի համբուրից
 Որ 'ի գգուանս իւր սիրակէզ
 Այսպէս փափկիկ ծընաւ ըբեզ:
 Աւանդ 'ի մէնջ գընաց հեռի,
 Թող գքեզ որբ և զես այրի
 Օանգրանիկն իւր որդեակ չքքնաղ
 Եւ զտարւալի հարսնըն մատաղ:
 Ոչ գողտրական քեզ այլ եղբայր
 Լիցի ընկեր սիրասպատար:

Դու անմեղուկ իմ աղաւնեակ
 Դու ինձ միայն մնացեր որդեակ:
 Այլ մեք լքեալ Թողաք անտէր.
 Եւ մինչեւ ես մայրդ քեզ առննթեր
 Բզոյցդ ցերեկ 'ի կոծ ամբաւ
 Լքեսորով մաշիմ 'ի ցաւ,
 Ժպտես ճէս քաղցրախօսիկ
 Կամ յօրոցիդ հանգչես հեղիկ.
 Եւ քո հայրիկ 'ի հող արխաւը
 Գերեզմանաց անդր 'ի բըլըւր
 Ընդ պար տուեալ նոճեաց 'ի սեաւ,
 Ննջէ մահուն ընդ ցուրտ շիրմաւ:
 Ըրդ 'ի շրթունսդ իսկ վարդածոյլ
 Օրաթուծեան փայլէ նըշոյլ.
 Բնդէր երեսըդ ժպտեցան.
 Հրեշտակք եղեն քեզ յանդիման
 Խաղապաւին բզբէ անոյշ
 'ի համբուրիկս նորա քընքոյշ.
 Սին դժինաւիայլ պարանոցիկդ
 Այլք ըզթաթիկըս քո փափկիկ,
 Եւ յանուանէդ ըզքեզ ձայնեն
 Կամ շուրջ ըզքեւ պար բոլորեն.
 Այլք խաղալով ընդ քոյդ օրոց
 Յունկնրդ մնչեն ձայնիկս երգոց.
 “ Ի քո քաղցրիկ մօրէդ ծածուկ
 Մանկիկ, յերկինս եկ փախիցուք,,
 Եւ քոյդ արդեօք Թռեալ հոգեակ . . .
 Օարթիւր զարթիւր իմ աղաւնեակ.
 Կաթն անուշիկ քընոյդ փոխան
 Քեզ ջամբեցից մեղրածորան:

Խեղճագործութիւն

Մտածիր դու քեզ ո՞վ մարդ, քննիր և տես՝ ինչի՞
համար ստեղծւեցար դու. մտքիդ բեր քո ուժը և կարողու-
թիւնդ, մտածիր քո հարկաւոր բաները և քո պարտաւորու-
թիւններդ, և կ'ուղղւին քո ամենայն ճանապարհները դէպ
'ի բարին:

Քո խօսքդ մինչև որ լաւ չըկռես՝ չըխօսես. և մինչև
որ քո գործքիդ վախճանը լաւ չըքննես՝ չըգործես, որ աղատ
մնաս նախատանքից. և ամօթի տակ չ'ընկնես, և երեսիդ
տխրութիւնը չըպատի:

Ինչոք և անմիտ մարդը սանձ չէ դնում իր լեզուին,
բարբառնում է 'ի զուր, և իրա անմիտ խօսքերից խայտա-
ռակւած ամօթով է մնում: Ինչպէս որ մէկը խիստ վաղում
ընի պատի կամ հողաբլրի վրա և առաջուց չըտեսած փոսը
ընկնի, այնպէս էլ նա որ շտապում է գործի մէջ մտնել և
չէ մտածում գործի վախճանը:

Ուրեմն լսիր, ահանջ դիր խորհրդաղլածութեան ճայ-
նին. պատճառ որ նրա խօսքերը ճշմարտութեան խօսքեր
են, և նրա ճանապարհները առաջնորդում են դէպ 'ի ա-
ներկրայ ճշմարտութիւնն:

Դաստիարակութիւն

Ո՞վ ես դու է՞ մարդ, որ ապաւինում ես քո իմաս-
տութեանը. կամ ի՞նչ ես պարծենում քո գիտութեան վրայ:

Գիտութեան սկիզբն՝ իրա անձին տգիտութիւնը ճանա-
չելն է. և եթէ կամենում ես ուրիշի աչքին աղնիւ և պա-
տուական երևիլ, թող յիմարտութիւնդ՝ քո անձնդ իմաս-
տուն ձեռացնելը:

Ինչպէս վայելուչ հագուստը զարդ է համեստ և
գեղեցիկ կնոջ, նոյնպէս և կենաց չափաւորութիւնը
գեղեցիկ զարդ է իմաստութեան, համեստ մարդու խօսքերը

աւելի պայծառ են ցոյց տալիս Ճշմարտութիւնը, և խոստովանելը երկմտութիւնը՝ քաւում է գիտութեան պակասութիւնը (ուրիշ խոստովանելի իրա պակասութիւնը՝ կը թեթեանայ մեղանդրանքից)։

Եւ այս չէ գնում իրա գիտութեան վրայ, մտածում է բարեկամի խրատները վրայ, քաղում է նրանց օգուտները։

Եթէ գովասանք է լսում, հեռացնում է իրա ականջը, և չէ կամենում հաւատ ընծայել. և իրան ձեռացնում է իբրեւ յետին ուղղութեանց ճանաչողների մէջ։

Եւ ինչպէս քոյ, որ աւելացնում է դեղեցկութեան շնորհքը, այսպէս էլ նրա առաքինութիւնները աւելի դեղեցիկ են երևում պարկեշտութեան շուքի տակը։

Մտիկ արա անձնապատանին և սնապարծին և մարիդքեր նրա ամբարտաւանութեան չափը, վայլուն շորեր է հագնում, ճեմում է հրապարակների մէջ, և աչքերը դէսուդէն գծելով ման է գալիս և կամենում է որ ամենի աչքին ընկնի։

Սկզբ կօհող արած բարձրացնում է գլուխը և չքտես է ընդում անանիկին, դռնօղութիւնով վերում է իրանից ցածրների առջևը, և մեծերից ծաղը և խայտառակ է ընդում, և ամենի աչքին վուշ՝ իրա անմատութեան և սնախառութեան համար։

Ուրիշների խորհուրդները արհամարհում է և չէ ընդունում, իրա մտաց կարծիքների մէջ վատահ ընկելով՝ ամօթով է մնում։

Իրա սուտ և ունայն ցնորքներով (երեւակայութիւններով) վերած պարծենում է, նրա ղրօսանքն ու պարսպումն ողջ օրը իրա գլխի վրա խօսք գծելն է և իրա վրայ միայն խօսելը։

Օտարաւի պէս շողմոռների շողորթութեան աղբիւրներից է խմում, մինչև որ նայն մարդադողներից խաբւած կը իրզն կընչանայ բոլորսին։

Աշխատասիրութիւն

Պատուիր որդեակ, աշխատասիրութիւնը, որ աղքատութիւնն ու կարօտութիւնը քո դռան շէմքին հոտ չընեն:

Գնահ միջիւնին սիրելի՛ որդեակ, դնահ, տես նրա ճանապարհները և սովորիր նրանից աշխատասիրութիւն. դնահ, տես նրան, որ թէ և հողագործութիւն չ'ունի, իշխան, հարկադիր, կամ տիրող չ'ունի, բայց նա իրա կերակուրը ամատանից է պատրաստում. իրա ապրուստը հունձքի ժամանակն է ժողովում: Կամ դնահ մեղուին (մեղրաճանձին) և սովորիր աշխատասիրութիւն՝ տես ինչպէս աշխատասէր է նա. և նրա գործը ինչպէս պարկեշտութեամբ է գործւում, որոյ վաստակը թաղաւորները և տնանկները բժշկութեան համար են գործ դնում: Թախկէտ նա տկար է ուժով, բայց ցանկալի և մեծարելի է ամենին. պատճառ որ պատուեց նա իմաստութիւնը՝ և պատուեցաւ ինքն:

Որդեակ, մինչև երբ պիտի պառկես, քնիցդ մըր պիտի զարթնաս: Եթէ փոքր ինչ կը քնես, փոքր ինչ կը նստես, փոքր ինչ կը նիւհես. փոքր ինչ կը հանգստանաս ձեռքերդ լանջերիդ (կուրծքիդ) վրայ դրած, էն ժամանակը քո աղքատութիւնը ճանապարհորդի պէս կը գայ, և կարօտութիւնդ սպառազինեալ (եարաղւած) մարդու պէս: Բայց եթէ աշխատասէր կը լինես, քո ամառը աղբիւրի պէս կը հասնի քեզ. և կարօտութիւնդ ինքնահալած կը լինի. չար մարդու պէս:

Կնիկացած օրերը անդարձ են, և ապագայ օրերն էլ չընի թէ քեզանից խլին. ուրեմն հետեիր ո՛վ մարդ, գործ դնել ժամանակդ որ ձեռքիդ է, մի՛ տրտնջար անցկացած կորուստիդ վրայ, և ո՛չ էլ մեծայայտ կաց ապագայի վրայ:

Քո ձեռքին է այս վայրկեանս. իսկ եգուցը ապագայի արդանդի մէջն է. և չ'ես իմանում թէ ինչ կը ծնանի: Ինչ

որ մտքումդ դրիր որ անես արա՛ շուտով, և ինչ որ առաւօտը կարող ես կատարել՝ էլ մի յետ գէձիր մինչև արեգակի մանեղ։

Շուտութեան ծնունդը խեղճութիւնն ու նեղութիւնն են. իսկ աշխատանքը առաքինութիւնով՝ ուրախութիւն է բերում։

Գործունեայ (աշխատասէր) ձեռքը կարօտութիւնը կը բառնայ և ուշատասէր մարդու միջակը բարօրութիւն է և յաջողութիւն։

Ո՛վ է դա որ լքուած է հարստութիւնով և բարձրացել է մեծութեան աթոռ, որ հագնում է փառաւոր շորեր, որոյ համբաւը տարածւել է քաղաքները, որ թագաւորների խորհրդարաններումը ներկայ է գտնւում։ Մա է որ ծուլութեանը թոյլ չըտաւ իրա տան շեմքին ոտ կոխել և ծուլութեանը ասաց՝, իմ անհաշտ թշնամի ես գուշ,։

Մա է որ առաւօտը վաղ է վերկենում, և գիշերը ուշ է քնում, նա է որ կըթում է իրա միտքը խորհրդածութիւնով, և իրա մարմինը աշխատանքով, և երկուսն էլ աղբի մէջ է պահում։

Կոյլ մարդը իր անձին բեռն է, նրա ժամերը (սա հաթները) ծանր և ուշ են անցկենում. և դէսուդէն է ընկնում թէ ինչպէս ժամաւաճառ ընի։

Միայի շուտքի պէս են անցկենում նրա օրերը. որոյ հետքը կամ յիշատակը անցկենալուց յետոյ էլ կարելի չէ գտնել։

Մա շաղաղւած է ցաւի մէջ. կամենում է մէկ բան շինել, բայց նրա ձեռքերը չ'են շարժում. տգիտութեան խաւարի մէջն է մանգալիս նրա միտքը. և նրա խորհուրդները շփոթւած են. սիրով փափագում է վարժելի իմաստութեան մէջ, այլ չըգիտէ թէ ինչպէս պարապի. ցանկանում է նուշ ուտել, բայց չէ կամենում աշխատել որ նրա կ'ճեպը կոտրի։

Սրա տունը զուրկ է ամէն բարեգարդութիւնից. նրա ծառաները վատնում են և կռւում, և ինքն գնում է դէպ ի կորուստը. տեսնում է իրա աչքով և լսում է ականջով իրա ընչից վատնումն (փչանաղը) գլուխը ժաժ է տալիս և ցան

կանում է բարեք կարգաւ ուղղել ամէնը, այլ նրա կամքը հաստատ կամք չ'են, մինչև որ վտանդն ու կորուստը բոլորովին հասնում են նրան կատղած քամու պէս, և ամօթով և ապաշաւանքով մտնում է դժոխքը:

✠

Շնորհ դու, անս լաւ որպիսի աւանդ տուեցաւ քեզ քո պարտքը է մեծացնել որդուդ որ ծնար:

Քո որդու բարութեան և չարի պատճառը դու ես. և քեզնով քո որդիդ կրէնի պիտանացու կամ անպիտան մարդուս ընկերութեան համար:

Ետապիւր դատախարակել քո որդուդ, և ճշմարտութեան կանոններով հաստատիր նրա միտքը:

Քննիր ուշքով նրա յօժարութեանց բնական բերմունքերը, և ուղղիւր տղայութեան հասակի մէջ, որ չար սովորութիւնն չընթաւորուի նրա սրտի մէջ և հասակի հետ չը մեծանայ:

Ուղղաբերձ կ'աճի և կրբարձրանայ նա եղևնոյ պէս լեռանց գլխներին, և գաղտթի մըայ կրդրորէի անտառի ծառերի մէջ. անխրատ որդին նախատինք է իրա հօրը, առաքինի որդին՝ փառք և պարծանք է հօր սպիտակափայլ մօբուայ:

Քո է երկիրը, դու պիտի գործես. ինչ որ սերմանես՝ նոյնը և կը հնձես:

Քո է որդին, ցանիր նրա սրտի մէջ առաքինութեան սերմերը, բարի խրատներով կը կրթես՝ բարի զուակ կ'ունենաս, չար օրինակ կը ընես որդուդ՝ չար զուակ կ'ունենաս, բարի ծառը՝ բարի պտուղ կը տայ, չար ծառը՝ չար պտուղ:

Սովրացրու նրան հնազանդութիւն, և կ'օրհնի քեզ համեստութիւն սովրացրու, և ամօթի տակ չի մնայ:

Սովրացրու նրան երախտագիտութիւն. և շնորհք կը դանի. մարդատիրութիւն սովրացրու և սիրելի կը ընի:

Ժողովարարութիւնն սովորացրու նրան, և անցաւ կրնի. խոհեմութիւնն սովորացրու, և կրօնաշուքի նրան:

Արդարութեան մէջ կրթիւր նրան, և պատուական կրնի աշխարհքիս մէջ. անկեղծութեան մէջ կրթիւր, և արհամարհած չի ընի ուրիշից:

Ժիր պատրաստիւր նրան, և կրչատանն նրա ասլանքը, գթութիւնն սովորացրու. և լիհանձն կրնի:

Սարժիւր նրան գիտութեանց մէջ, և օգտակար կրնի նրա կեանքը. կրթիւր նրան Աստուածապաշտութեան մէջ, և երանելի կրնի իրա մահուան ժամանակը:

Ուրիշ:

Քննեցէք Աստուծոյ գործքերը որ իմաստութիւնն սովորիք. խրատեցէք օրինակով որն որ ցոյց են տալիս ձեզ նրա ձեռաց արարածները:

Գնահատաւոր որդեակի, և տե՛ս ամայութեան մէջ արագիւ ձագին, սովորիւր նրանից ծերատածութիւնն. տե՛ս թէ նա ի՞նչպէս իրա թեւերի վրայ բարձած տանում է իրա ծերացած հօրը, և տեղաւորում է հանգիստ և ապահով տեղումը և կերակրում է նրան:

Օւռակաց գութը քաղցր է ամէն անուշահոտութիւնից: Ճանաչելի հօր երախտիքը, որ ծնաւ քեզ, և մօրը որ մեծացրուց քեզ:

Եւր նրա շրթունքից դուռ եկած խօսքերին, պատճառ որ քո բարօրութեան համար են խօսում. ախանջ դիր նրա խրատներին, պատճառ որ սրտի սէրից են բղխում:

Պարման տարաւ (դեզ արաւ) քեզ քո առողջութեան համար, աշխատութիւն քաշեց քո անձին հանգստութեան համար. այս պատճառաւ էլ պատուիր նրա ծաղկած ուրիքը (մօրուքը) և մի՛ ամաչացնիւր նրա ծերութեան արձաթափայլ մագերը. միտքդ բեր քո մանկութեան անկատար հասակը, և մի՛ մոռանար քո յանդուգն պատանեկութեան եռանդը:

և երկայնատու թեամբ համբերիր քո ծերացած ծնողաց տկարութեանը, և չթողնես անօգնական նրա դողդոջուն հասակը:

Եւթիմիէս (Ժողովեա) նրա սպիտակաւայլ ալեքը գերեզմանի մէջ. և քո որդիքը բարեգթութեան խնամքը քեզանից ստիճած՝ քո բարեպաշտութեանը վոխարէն բարիք կը հասուցանեն:

Եղբայր:

Մէկ հօր որդիք էք դուք, մէկ խնամոց թեամբ թեամբ պահած, և մէկ մօր սօնիքը (ծծեր) մեծացրին ձեզ:

Կապիր քո սիրտը քո եղբարց հետ սիրոյ կապերով, և կը բնական ընդհանրութիւն և երջանկութիւն:

Եւ եթէ դէպքը պահանջեն իրարուց բաժանել ձեզ, անմոռաց ունեցէ՛ք արեւնակցութեան անլոյժ կապը (միաւորութիւն) որ պարտաւորում է ձեզ սէր և միաբանութիւն ունենալ միմեանց հետ. և չըլնի թէ օտար մարդու նախապատիւ համարէք ձեր հարազատ արիւնից:

Եթէ անյաջողութեան մէջ ընկաւ եղբայրդ օրհնիւր նշան, եթէ քո քոյրը վտանգւած ընի նեղութիւնով՝ մի թողնիր նրան անխնամ և անտերունչ:

Եւ երբ որ իրար սիրում կըլնէք՝ ձեր հօր խնամքը անպակաս կըլնի ձեզանից:

Կիւն

Ի սիր սիրելի՛ դուստր իմ, լսիր իմատուութեան ձայնին, և ուղղութեան պատգամները տպաւորիր քո սրտիդ մէջ. որ աւելի պայծառանան քո շնորհքը. և քո դիմաց գեղեցկութիւնը, որ նմանում է վարդին, և հենց ծաղկի թաւամբուց էլ պահէ նրա պէս իրա անուշահոտութիւնը:

Ի՞նչ կենաց արատօտաւն և մանկութեան հասակիդ՝ երբ

շտտ աչքեր տնտղում ընեն քեզ, զգաստ կաց նրանց հրապուրանքից (խաբեբայական խօսքերից), զգոյշ կաց քո սրտիդ, և չըտաս ականջդ նրանց խաբէութեանը:

Ճանաչիր քեզ մարդու պատշաճ ընկերութեան համար կարգւած, և ոչ թէ նրա ցանկութեան գերի: Նրա օգնութեան համար են տւած քեզ քո կեանքը, նրան քաղցր սիրով մխիթարելու համար, և նրա խնամոց (հօգատարութեան) փոխարէնը քաղցր գգուանք հատուցանելու համար:

Ով է կանանց մէջ, որ իրա մարդու սիրտը դրաւած ունի, և հնազանդեցնում է նրան իրա սիրոյ լուծի տակը:

Իհա ճեմում է նա զէմուդէմը անմեղութիւնով և գիմաց պարկեշտութիւնով անկեղտ մաքրութիւնը փայլում են նրա մէջ:

Նրա ձեռքերը գործ են պտուում, և նրա ոտքը չեն սիրում տնից դուս մանդալ:

Շորեր ունի հաբին չափաւոր և վայելուչ: Ժուժկալութեամբ է կշտացած: Հեղութիւնն ու քաղցրութիւնը փառաց թագի պէս կապած ունի գազաթի վրայ:

Նրա լեզուի խօսքերը քաղցր են, մեղրի քաղցրութիւն են կաթում նրա շրթունքից:

Նրա ամէն խօսքը համեստութեամբ են համեմած, ճշմարտութեամբ և զթասիրութեամբ են նրա պատասխանիքը:

Նրա բոլոր կենաց ընթացքը հլութիւն և հնազանդութիւն են. և նրա վարձքը հանգալատութիւն և երջանկութիւն է:

Նրա գործքերի մէջ խոհեմութիւնն (խելօքութիւն) է յառաջնութաց ընում, և նրա աջ կողմը առաքինութիւնն (բարեգործութիւն) է բաղմած:

Սէր ու քաղցրութիւն են խօսում նրա աչքերը, և զգօնութիւնը (խելօքութիւն) արքունի գաւազանն ձեռին բռնած՝ նրա ունքերի վրայ է բաղմած:

Նրա առջևը բերանը հասց ունի լիբբը . և նրա լաւութեան ահից պապանձուում է :

Տաւրաւանքներ լսելուց , և ընկերոջ համբաւը բերան բերան ընկնելուց , եթէ բարեսիրութեան և բարեկամութեան պատճառաւ չբացանի իրա բերանը , գոնէ լաւութեան մատը դրած ունի նա իրա շրթանց վրա : Տարութեան կայանք են նրա սիրտը . այն պատճառաւ էլ ողորկի չարութեան կարծիք չէ տանում :

Երջանիկ (բախտաւոր) է այն մարդը որ գտու նրան , երանելի են մանկունքը , որ մայր ըլնեն կանչում նրան :

Նա ինքն է իրա տան վերահացուն , ամէն ինչ անդորր և խաղաղ . բարի խնամքով հրամայում է , և լսում են նրա խօսքը :

Նա առաւօտը վաղ է վերկենում , և իր գործքերի տընտեսութեան հոգսն է անում , և ամենին կարգում է և աւլիս է իրանց սպասաւարութեան արժան գործը :

Օքոսանք է համարում նա իրա տանու խնամքը (հոգսը) . և ամենայն ջանքով նրանով է պարապում . վայելութիւնն ու չափաւորութիւնը նրա բոլոր տան մէջն են երեւում :

Ժրագլուխ (արիւնջան) տնտեսութիւնով (կարգաւորութիւնով) պարծանք է ըլնում իրա մարդուն , և անխօս ուրախութիւնով գովասանք է լսում :

Իրա որդեքերանց միտքը իմաստութիւնով է կրթում , և իրա բարեբարոյ վաբքով ուղղութեան օրինակ է տալիս նրանց կենացը :

Նրա շրթանց խօսքերը՝ մանկանց համար օրէնքներ են . և իրա ակնկալութիւնը հնաղանդ և կամարար է անում նրանց :

Չայն է տալիս , և շտապով դալիս են ծառայքը , մատնով հասկացնում է և կատարում է գործը , պատճառ որ նրանց սիրտը սիրոյ օրէնքին են լսում , և նրա բարեկարգ հրամանները թւեր են տալիս նրանց դարձապարներին (կրօնկներին) :

Անխառնաւանութեան քամով չէ վերում նա յաջ-

ղութեան մէջ, և աննուաճելի համբերութեան գեղով
կապում է բաղդի վերքերը:

Նա խրատները և դուժերը նուազացնում և հանդար-
տացնում են խռովութիւնը, նեղութիւնները և խորձանք-
ները. նրա սրտին մօտենալուց՝ նրա մարդը մխիթարւում է:

Երանի մարդուն, որ կին առաւ նրան, երանի սրդուն,
որ նրան իրա մայր ընի կանչում:

Եթէ դանւի ժրագլուխ կին, նրա գէնը գոհարներից
(Թանկագին ակներից) շատ աւելի է:

Նրա մարդու սիրտը ապահով (անկասկած) է նրա վրա,
այնպիսի մարդը աւարի (Թալանի) երբէք չի կարօտի:

Մենայն լաւութեան և կենաց՝ գործակից է իրա մար-
դուն՝ և ոչինչ վնաս չի բերի երբէք նրան:

Բռուդ և կտաւ է գտնում և իրա ձեռքով պիտանի
հանդերձներ է գործում. Նա վաճառականի շահաբեր նաւի
նման՝ հեռու տեղից է ժողովում իրա գանձը (խաղինա):

Ազատիան է վեր կենում (զարթում) և կերակուր է
տալիս տանու մարդկանց և գործ է նշանակում նաժիշանե-
րին (աղախներին, քօծերին):

Տեսնում է դեղեցիկ արտ՝ և առնում է էն, և իրա
ձեռաց պողով երկիր է գործում, կամ այդի է տնկում:

Գօտիկը կասած պնդում է իրա մէջքը՝ և բաղունները
մխում է գործի մէջ. ճաշակեց և տեսաւ՝ որ քաղցր է աշ-
խատելը, նրա ճրագը բոլոր գիշերը չէ հանդչում:

Իրա ձեռքը իւրկին է երկարացնում, և ամրով ըռքն
է բռնում:

Ձեռքը աղքատին բաց է անում, և կարօտներին է եր-
կարացնում:

Տան կողմից ոչինչ հոգս չէ քաշում նրա մարդը,
երբոր ուրբովն տեղ ուշանում է:

Իրա տան մարդոց համար ձնից չէ վախենում. պատ-
ճառ որ բոլոր ընտանիքը կրկին հանգերձ ունին հադած:

Իրա ծածկացներն է շննում . իրա շորերը բեհեզ (բա-
րաւ կառ) և ծիրանի է (կարմիր գեղեկնի հետ խառն) :

Իրա մարդը ճանաչուում է դռներէ մէջ՝ երբսր Ժողո-
վումը ծերերի հետ է նստած :

Կտաւ է գործում և ծախում է, և վաճառականնե-
րին գոտիկներ է տալիս :

Օջրութիւն և վառք է հագնում , և յետին օրերին
պիտի ուրախանայ :

Կա իրա բերանը իմաստութեամբ է բաց անում , և
նրա լեզուի վրայ քաղցրութեան օրէնք կայ :

Իրա ոտը չէ սիրում իրա անկի դուռ մանգալ , այլ
միշտ իրա տան ճանապարհներն է քննում , և ծուլութեան
հայ չէ ուտում :

Իրա օրդիքը վեր են կենում , և նրան երանելի են կո-
չում . նրա մարդն էլ նրան գովում է, ասելով՝ , շատ աղ-
ջիկներ առաքինի էլան , բայց դու ամենից գերազանց էլար :
Սուտ հաճութիւններ, և կնոջ ունայն գեղեցկութիւն չըկայ
քո մէջ : Այլելութիւնը սուտ է, և գեղեցկութիւնը ու-
նայն է . սակայն Տիրոջից վախեցող կնիկը պիտի գովուի :

Տակէր նրան՝ իրա ձեռքի պտուղից, և նրա դորձքերը
դռներէ մէջ գովեն նրան : Լուսն. Լուս. 4Լ. 10. — ԳՅ1 :

Դոժալաւիւն

Լոռլութիւնը , իմաստութիւնը , հոգւոյ անգործու-
թիւնը , երկնատուր պարգևներ են , օրանք են որ ասելի մո-
տացնում են մարդուն երանութեանը այս աշխարհքումս :

Եթէ օրանց ստացար և կամենաս պահպանել քեզ
մինչև քո ծերութեան հասակը , հեռացուր քեզանից հեշ-
տութեան սուտ հրաւերը , և նրա յորդորանքից վախճիր :

Եւ երբ նա իրա վախկութիւնը և գգուանքը տարածի
սեղանի լիութեան մէջ , երբ նրա գինին փրփրացած բաժակի
(թասի) մէջ պղպջակները (քսիկեր) վեր արձակում ընի , երբ

քաղցր դէմքով և զուարթ աչքերով մտիկ տալիս ընի. քեզ և յորդորում ընի որ ուրախ սրտով վայելես բարեկեցութեան մէջ. ահա հասել է քեզ փորձութեան ժամը (սահաթ). այս պատճառաւ զգոյշ կաց և մի՛ տուր զբոլակը. քո զգաստութեանը պահպանութիւնից:

Պատճառ որ ցանկալի հեշտութիւնները որ խոստանում է քեզ՝ մոլութիւն կրիսխելին. և նրա վայելելը շատով զանազան ցուեր կը բերեն քեզ, և կեանքդ մաշելով՝ միշտ դէպ 'ի մահը կը տանեն:

Մտիկ տուր քո բոլոր 'ի շուր և տես նրա կոշտների հրաւիրածներին. և ուրախ դէմքիցը կը ճանաչես նրանից որ տաճներին սնտախ յորդորանքներովը:

Տես ի՛նչպէս հաշւած ու մաշւած են մարմնով, ցաւադար կեանքով և վեհերոտ (վախկոտ) սրտով զըւած տանջւում են:

Նեղութեան դժուարատար օրերը և տառապանաց ժամանակը կը գան զեղխութեան (անառակութեան) վաղանցուկ հրճուանքի ետեւից. խանդարել և պահսել է նրանցից քաղցր և կերակրոյ փափագը. անուշահամ կերակուրները այնուհետեւ էլ բաւական չ'են ախորժակ տալու նրան:

Պատճառ որ ինքն իրանց զգայազուրկ արին. իրաւամբը կը ժառանգեն պատիժը՝ որն որ բարձրեալն Մտուած հաստատեց բնութեան պարզէնների մէջ, նրանց խրատելու համար, որոնք այն երկնատուր պարզէնները չարացար են գործածում:

Ի՞նչո՞ւ ո՞վ է դա որ զուարթ դէմքով և սիրուն ընթացքով ճնմում է դաշտի էն կողմը:

Վայն զգոյն վարդերը ծիծաղեն տալիս նրա դէմքին. անոյշ բուրումն առաւօտին ծաւալում է նրա շրթունքից. բերկրութիւնը անմեղութիւնով մեղմած փայլում է նրա աչքերի մէջ, և ուրախալից սրտից՝ երգերն քաղցրաճայնութիւն է հնչում՝ հանգարտ ընթացքով մանգալիս:

Մոռցութիւն է նրա անունը, և ժրութեան դուռտըր է, որ ծնաւ չափաւորութիւնից. նրա որդիքը բնակւած

են Սանտոննեայ հիւսիսական լեռանց այն կողմը :

Արի զաւակներ են և ժրագլուխ և կայտառ . ամէն վայելչութիւնով և առաքինութիւններով զարդարած . ինչպէս և նրանց քուրերը :

Իրանց հօր պարապմունքը նրանց ախորժակը զարթացնում է, և մօրը կերակրով հաստատում է նրանց :

Սեռ ուրախութիւն է նրանց համար կուսել ականատես կրկն հետ, նրանց վառքը՝ յաղթելն է սովրած չարութեանը :

Չափով և կարգաւ են նրանց վայելքը , այն պատճառաւ էլ և դիմացկան են . չ'են երկարի քնումը , բայց քաղցը և խաղաղ սրտով են քնում :

Նարատ է նրանց արիւնը , և միտքը խաղաղ . նրանց աների ճանապարհը չըտօրեցաւ բժիշկը :

Աղատութիւնը բնականից չ'էլաւ մարդկերանց . և անկասկած անդորրութիւնը չըմնաց նրանց բնականութեան մէջ :

Արտաքուստ առաջը առած գնում են դէպ 'ի նորնոր վտանգները , և ներքուստ ոտխը թաղ կացած մատնում է նրանց :

Քաջողջութիւնը , դօրունը , գեղեցկութիւնը և ժրութիւնը՝ ցանկութեան իղձեր են գծում չար սիրոյ սրտի մէջ :

Սերակներում կանգնում է իրա կանաչազարդ հովանոցի տակովը . գուրգուրալով դէպ 'ի իրան է գծում նրանց աչքերը , և տարածում է փորձութեան թակարդները :

Պէր ու փափուկ է մարմնով , և տեսքով շատ դուրեկան . նրա շորերը սուտ զարդերով է յարմարացրած , նրա աչքերը անառակութիւն է բարբառում , նրա գոգումը թաղ կացած նստած է խաբեբայ հրաւիրողը , մատնով նշան է տալիս և կանչում է իրա մօտ , դիմաց գեղեցկութիւնով դրձում է նրանց իրա սիրոյ մէջ , և քաղցը խօսքերով աշխատում է բռնել նրանց որոգայթի մէջ :

Փախիր վախիր քաղցրախօս բերնից , և ականջ մի՛ դիր նրա զմայլեցուցիչ ձէնին : Եթէ քո աչքերը բնական նրա սրակաթ աչքերին , եթէ դրկեց և փաթթուեցաւ քեզ . յետոյ

կշիռած կրպակի քեզ անցեր՝ իրա կապանքներից:

Եթե ու անարդանքը կրդան կըհասնեն, հիւանդութիւնը, չքաւորութիւնը, տառապանքը (նեղութիւն) և սարքը (զգջալ) շուտով վրա կըհասնեն:

Ուժամարի ըլած տախանքից (ցանկութիւնից) զըզուած փափկասէր խանդաղատանքից (ոիրոյ կարօտութիւնից), թուլութիւնով և ծուլութիւնով մաշւած զօրութիւնն ու առողջութիւնը կրպակին քեզանից, և կընշանայ մարմնայգիայելուչ շինուածը, կարճօրեայ կըլնի կեանքը, շատ նեղութիւններ և ցաւեր կըկրեն, և ոչոք կարեկից չի լինիլ քեզ:

Բայց որոնք չարաւոր ժուժկալութեամբ են ապրում, առողութիւնը (ծաղիկեայ հասակը) կըդօրացնի նրանց ջերը, քաջութեան ուժը կըբնակի նրա ոսկորների մէջ. գործով և աշխատանքով պարապելը զրօտանք կըլնի նրա համար ամէն օր:

Գիւտաբիւն

Ինչպէս որ գարունը սիրում է երկրի (հողի) երեսին կանաչադեղ տունկ և նոր ծլած ծաղիկ, ինչպէս որ քաղերեր ամառայ առատութիւնը, պարարտացնում և առատացնում է հունձքը, այսպէս էլ գթութեան ձերբը բարեպարգևներ են ցօղում մարդկային ազգի վրա:

Ով որ կարեկից է ըլնում նեղացածին՝ նա սիրելի կըլնի ամենին. իսկ ով որ անկարեկիցն է, նա կարող չէ սիրելի կամ հաճոյ ըլնել:

Սապօրծը (ղատար) չէ մտիկ անում դառնի մոնչելուն, և ոչ էլ անգութ սիրտը ցաւում է ուրիշների նեղութեան վրա:

Բայց գթոտ մարդու արտասունքը քաղցր է ցօղի հատիկներից՝ որ վարդերի ծերերից կաթում են երկրի (հողի) սրտում:

Եկանջը մե' խիլը նեղացածի և անանկի լացի ձայնին

և մի՛ խտացրուր սիրտդ անմեղի փորձանքների վրա :

Երբ անաեբունչ որբը աղերսանքով ձայն տալիս ըննիքեղ, երբ հարստահարած և ցաւալից որբւեքու սիրտը ողորմադին արտասուելով խնդրում ըննիքեղանից օգնութիւն, քո գութը ընկնի նրանց թշուառութեան (խեղճութեան) վրա, և անտերունչներին և ընկածներին օգնական և պահապան ընեն, եթէ տեսնես ցրտից խլած աղւորին՝ ՚ի զուր մանդալիս փողոցումը. բայց արա քո սրտի գութը, վեր առ նրան քո բարեգթութեան թեւերի վրա և թափիր մահուանից, և կ'ապրի քո անձը :

Ողորմածութիւն

Երանի՛ նրան, որ իրա սրտի մէջ դձեց գթասիրութեան սերմը. սէր ու ողորմութիւն կրդանի նա :

Բարութեան դետեր կրքղտեն նրա սրտի աղբիւրից, և առատ առատ կրկաղեն վտակները մարդկանց օգտի համար :

Չեւք է տալիս և մխիթարում է նեղացածներին նրանց նեղութեան մէջ, և ուրախանում է, երբ օգնում է ամէն մարդու յաջողութեանը :

Սեղագրանքի տակ չէ դձում դրացուն (հարեանին), արհամարհում է նախանձու և ատելութեան խօսքը. և քսութիւնը (խաբար տանել բերել) բերան չէ բերում :

Երբում է անիրաւ արարմունքները և մեղքերը, և ջնջում է մեքից :

Սրէժը և ռխակալութիւնները նրա սրտի մէջ տեղ չ'են գտնում :

Փխարէնը չարին չար չէ հատուցանում, և մինչև անգամ չար թշնամիքին էլ չէ ատում. այլ նրանց անիրաւութեանց դէմը սէր է ցոյց տալիս :

Երմբւում է մարդկերանց ցաւերի և ներողութիւնների վրա. աշխատում է թեթեւցնել նրանց նեղութիւնների բեռն, և վարձք է համարում ուրախանալը նրանց յաջողածների վրա :

Հանդգնում է հատաղի բարիութեան կրակը . խաղաղարար է ընում հակառակողներին, և չարացածներին հանդարտեցնում է . հակառակ է չարին, նախանձու և ատելութեանը . դուրում է և գործակից է ընում իրա հարևաններին լաւ լաւ խորհուրդներին: Այս պատճառաւ էլ նրա անունը դուրութիւնով և օրհնութիւնով կը յիշուի:

Արտաբարձութիւն

Ինչպէս որ ծառի ճիւղերը կենդանարար հիւթ են տալիս արմատին, որ վեր բարձրացրած ունի նրանց, և ինչպէս որ դեռ իրա ալիքը (տալիւ) բշելով տանում է ծովը. այսպէս էլ երախտագիտի (լաւութիւն իմացողի) սիրտը ուրախանում է իրա ստացած բարեաց փոխարէնը վճարելուց:

Օւռարթ սրտով իրան շնորհապարտ է համարում . սիրով և պատուով է մօտիկ տալիս իրա բարերարին:

Եւ եթէ իրա ձեռք չըհասնի կշռել բարեաց փոխարէնը, բարեակեր կամքով նրանց յիշատակը մտքին է բերում, և չէ մոռանում իրա բոլոր կենաց մէջ:

Բնատաձեռն մարդը նման է երկնքի ամպերին, որ թափում են երկրումը ծաղիկ, բանջար և պտուղ . իսկ անշուշորհի սիրտը՝ աւագոտ դաշտ (տափ) է. խմում է անկուշտ երկնքից եկած անձրեւը, և երկրի տակը պահելով՝ և մէկ պտուղ էլ չէ բերում:

Սի' նախանձիք քո բարերարի հետ, և մի' կեղծաւորելով թաղցնիր նրա լաւութիւնը որ քո վրա է . թէպէտ աւելի լաւ է տալը քան թէ ընդունելը, բայց շնորհապարտ խոնարհութիւնը որսում (շահում) է սիրտը, և հաճոյ (դուրեկան) է Բնածուն և մարդկանց:

Անարտաւանից լաւութիւն մի' ընդունիր, և անձնասիրի և ժլատի պարտքի տակ մի' ընկնիր, որ չընի թէ իրանց մոտի պարծանքով ամաչացնեն քեզ . պատճառ որ անկուշտ է աղահուսիսեան փափագը:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԼԳՊՔ

Երեւորէի:

Մէկ ազնուական երբ որ հեռու երկիր ճանապարհորդութիւն պիտի անէր, կամեցաւ, որ իրա երեք որդիքը դան իր մօտ և իրան մէկ մէկ սիրոյ նշան տան, որ մաքիցը բնաւ չըզուս դան, և ուր որ դնայ յիշն նրանց: Առաջինը բերաւ մէկ պտտիկ մարմարինն քար, որոյ վրայ որ հօր անունը փորել էր: Միւսը ընծայեց ազնիւ և անուշահոտ ծաղիկ ների փունջ: Երրորդը մօտ եկաւ և ասաց հօրը. « Մերել, ես ոչ մարմարինն քար ունիմ քեզ տալու անունդ վրէն փորած և ոչ անուշահոտ ծաղիկների փունջ, այլ միայն իմ սիրտս: Էս տեղ քո անունըդ անջնջելի փորւած է, էստեղ քո յիշատակութիւնդ միշտ պատուաւիւն է. և ահա էս սիրտը ազնուական սիրով լքցուած քեզ ընծայում եմ, որ միշտ քեզ պիտի հեռեի, ուր որ ճանապարհորդութիւն անես, և քեզ հետ պիտի կենայ, ուր որ կենաս:

Մէկ փրտան աղջիկ:

Մէկ աղքատ կնիկ, որ առաջ շատ լաւ օրեր էր տեսել, մէկ առաւօտ նստած լացէր բնում իրա խեղճութեան վրայ: Իրա աղջիկը՝ երբոր տեսաւ մօր լացը, մօտ դնաց և պասց. «, մի՛ լաց ըլիւր մայր իմ, մի՛ լաց ըլիւր. դիտեմ ես ինչն է քեզ կդպէս լացեցնում. հնդուր համար է, որ էս առաւօտը մեիք նախաձաշիկ անելու բան չ'ունենը, բայց հագս մի՛ քաշիւր: Աստուած մէկ օր չ'է անցկացրել, որ կերակուր չըտայ մեզ և դիտեմ անապահոյս, որ էս օր էլ նա մեզ անտես չ'ի տնիւր, « Հաղիւ թէ էս խօսքերը դեռ վերջացրել էր, մէկէլ լանկարծ հարեւնի տնից մէկը եկաւ և ասաց, որ քիչ բան կայ նրա համար շինելու: Մեր ուրախութիւնով դուս դնաց և քիչ ժամանակաց մէջ

էն դործը կատարեց, իրա աշխատութեան վարձը ստացաւ և նոյն փողով հաց և կերակուր դնեց, և դնաց իրա տուն : Սերեկան աղ ջիկը մօր առաջ դուռ եկաւ աչքերը լիքը շնորհակալութեան արտասանելով և իրա քնքուշ երեսի վրայ ուրախութեան նշանով առաց, ,, տեսա՛ր, սիրելի՛ մայր իմ, չ'առացի՞ քեզ թէ Լստու՛նձ կերակուր կըղըկի մեզ էսօր : Սեր երկնաւոր հայրը իրա սղարմութիւնը ամէն օր կը ապր մեզ՝ որ մեր մտքից ու խելքից էլ անցկացած չը ընի : :

Սրբի ուղեւոր :

Յովսէփը և Պետրոսը մէկ օր դուրս եկան իրանց անից և դնացին ման դալու : Ղանապարհին անց էին կենում՝ մէկ պարտիզի (բաղի) մօտից, որի դուռները բաց էին : Երանք մտան սրտաէղը և տեսան որ մէկ քանի խնձորի ծառեր էն քան շատ խնձոր ունին, որ ծառի ճիւղերը ծանրութիւնից կռայել են : Տես, Յովսէփ, ասաց Պետրոսը, մենք էս տեղ կարող ենք խնքան ուղեւորներ ուտել : Էստեղ ո՛չ որ չէ երեսում : Երբ շուտով մէկ ճիւղքը կտրենք, Լստու՛նձ չը պէտք է անենք : խնձորները մերը չեն, ուրիշներինն են պատասխանեց Յովսէփը : — Լս՛հ, ի՞նչ կոյ, ասաց Պետրոսը, պարտիզի տէրը իսկի կարող չէ խմանալ, թէ մենք մէկ քանի խնձորներ ենք կտրել : Նա էնքան շատ ունի, որ կտրելի չէ համարել : — Ղնմարիտ է, ասաց Յովսէփը, բայց էլի պէտք է չ'անենք էդ բանը, էնդուր համար, որ թաքուն վերառները տրիշի բանը, թէ և շատ փոքր բան լինի, դողութիւն կըլնի : Սրբի մտացել՝ ևս ինչ ասաց մեր հայրը, երբոր պատմում էր էն դոգի պատմութիւնը, որ մեր տան առաջից տանում էին շրթաշով (զինջիւզ) կապած : Ի՞նչ ասաց, հարցրուց Պետրոսը : Ես ասաց, թէ փոքրով սկսում է . մեծով վերջանում է : Պետրոսը սկսաւ խորը միտք անել և վերջը ասաց՝ դու Ղնմարիտ էս ասում, սիրելի Յովսէփ, դնանք էս տեղաց : Պետրոսը ուզում էր վատ բան անել, ի՞նչ ուզում էր ուրիշ

խնճորները ուտել : Ի՞նչպէս լաւ էլաւ , որ Յովսէփը չըթու-
ղաւ նրան էդ բանը անել :

Արի՜տէ՛ և խառնէ՛ քէտդ պղտայ .

Սիմոնի ծնողքը պատուաւոր և խելօք էին : Սրանց տունը
թէպէտ փոքր էր , բայց ամէն բանը կարգով էր պահած
և խտակ . հնդուր համար որ Սիմոնի մայրը չէր սիրում որ
տան բաները էս կողմը էն կողմը ցրուած լինին և դետնի
(պօլի) վրա աղը լինի կամ ուրիշ կեղտոտ բան : Բաւաւոր
ամէն բանից առաջ նա աւելում էր իրա փոքրիկ տունը ,
կարգում էր կողմերը և ուրիշ բաները և պատուհաններին
դուռը բաց էր անում , որ տան օդը խտակուի : Կարելի՞ էր
որ Սիմոնը անկարգ մեծամար և խտակութիւն չըսիրէր , երբ
որ մայրը նրան բարի օրինակ էր ցոյց տալիս : Սրանից երեւ-
ում է ինչքան հարկաւոր բան է , որ մանկուիքը պատիկուց
սովորեն կարգին և խտակ կենալ : Օգործինակ Սիմոնը եր-
բէք չէր կամենալ որ ուսումնարան դնայ առանց մաղերը
սանդրելու , ուրիշ անկարգ տղերքի պէս , երբէք չէր թող-
նիլ որ ցեխոտ կոշիկները (չէքմէքը) մնան սաղ օր առանց
որբելու . կամ թանաքով կեղտոտած ձեռքերը քսել իրա
շորերին , ինչպէս անում են շատ անկարգ տղերք : Սա միշտ
գնում էր ուսումնարան մաղերը տանդրած և ձեռքերը իս-
տակ լուացած . նրա հագուստը միշտ լինում էր խտակ և
թափ տուած , կոշիկները խտակ սրբած , իսկ նրա գրքերի
մէջ երբէք չէր կարելի տեսնել մէկ թանաքի կէտ կամ խաղ :
Սա երբէք իրա դդակը չէր գձում սեղանի վերայ և թա-
նաքը բանաշնելուց շատ զգոյշ էր լինում , նրա քնթի աղ-
լուխը միշտ իրա մօտ էր լինում : Բայ խտակութիւն և
կարգ սիրող և պահպանող Սիմոնը ուրախութիւն էր իրա
ծնողաց և վարժապետների համար : —

ՂԵՏԱՐԻՒ ՊՈՂԱՅ:

Պոստանդինը խաղում էր իրանց դռան մօտ: Մէկ դըրացի կանչեց նրան և խնդրեց, որ նա սպասի փոշտի գալուն, և ինչպէս հեռուից տեսնի, խնդրեց իմաց տայ նրան: Պոստանդինը մեծ ուրախութիւնով յանձն առաւ կատարել էս խնդիրը, Էնդուր համար որ բարեսիրտ տղայ էր: Եւ խնդրեց վաղելով դնաց մինչև քաղաքի դուռը և մէկ բարձր տեղ կանգնեցաւ, որ հեռուից տեսնի փոշտի ճանապարհը: Ահա սահաթ աւել սպասեց Պոստանդինը: Ինչ Ժամանակը էնտեղից անց էր կենում Գլխորը. սա ինչպէս տեսաւ Պոստանդինին, ձայն տուեց՝ արի դնանք միասին. էն տեղ մեր ընկերները խաղում են: Պոստանդինը պատասխան տուաւ, Թէ ամենեւին չեմ կարող դնալ քեզ հետ, Թէ և սիրտս շատ ուղում է. Էնդուր համար, որ խոստացել եմ դրացիին հստեղ սպասել փոշտի գալուն, որ նրան իմաց տամ: — Մինչև երբ պէտք է մնաս հստեղ արեգակի տակումը, հարցրուց Գլխորը. քեզ էդ խկի հարկաւոր չէ, և բաց յայտնանէ դու բաւական սպասել ես, արի դնանք: Բայց Պոստանդինը հաստատ մնաց իրա խօսքի վերայ, Թէ և Գլխորը շատ խնդրեց և վերջը ծիծաղեցաւ էլ նրա վրայ: Պոստանդինը մտքին էր պահել իրա հօր խօսքերը, որ իրան միշտ ասում էր, Թէ ճշմարիտ մարդը պէտք է իրա աւած խօսքը հաստատ պահի և կատարի: Թէպէտ նա էլ սաղ կէս սահաթ սպասեց էն տեղ, և արեգակը նրան շատ նեղացրուց, բայց ինչ մեծ ուրախութիւն էլաւ նրա համար. երբոր նա հեռուից տեսաւ փոշտը և վաղելով դնաց իմաց տաւ դրացիին: Ղաւը ի՞նչ կ'անէիք եթէ ձեզ էլ պատահէր այսպիսի բան:

ԲԱՆՈՒՄԵՐ ՊՈԼՆԷ:

Շուշանը պատիկուց մեծ սէր ունէր ուսում առնելու և հարկաւոր գիտութիւններ ստանալու: Երբ որ նա մէկ նոր բան էր տեսնում, էնքան չէր հանդատում, մինչև որ լու

անդէկանում էր. իսկ եթէ իրա մտածմունքովը չէր կարա-
նում հասկանալ թէ ինչի՞ համար պէտք է էն բանը, և
թէ ինչի՞ համար էն տեսակի է և ոչ ուրիշ տեսակի, նա էն-
քան հարցնում էր մինչև որ լաւ հասկանայ: Այս ուրախու-
թիւնով զնում էր ուսում առնելու, և շատ վատ եղանա-
կին էլ ճանապարհի երկարութիւնը նրան չէր վախեցնում:
Այս շատ ուրախանում էր ամէն նոր խրատական գրքի վրա,
ուրիշ մանր աշխերտների նման չէր շուռ տալիս միայն թուղ-
թերը, այլ կարգում էր ուշադրութեամբ և լաւ միտք ա-
նելով, և էնդուր համար եթէ նրան հարցնում էին թէ
ի՞նչ է դրած այն գրքումը, շուտ պատասխան էր տալիս:
Եւ ամէն գործումը, մանաւանդ կարդալումը, նա շատ հմուտ
էր, և աւելի լաւ սովորելու համար նրան տուին մէկ երևելի
կար կարողի մօտ օգնական, որ յանձն առաւ նրան սորվեցնել,
էն պայմանաւ որ նա մէկ բոլոր տարի կանուխ առաւօտուանից
մինչև գիշեր կարի կամ դործի նրա համար առանց վար-
ձու: Երբ որ այս դառը տարին անց կացաւ, նա էնքան լաւ
սովորել էր, որ ոչ թէ միայն կարողանում էր իրան պա-
տուով պահել, այլ և իրա հիւանդ մօրն էլ ծերութեան
ժամանակը պահում էր: Որովհետև բանասիրութիւնը միշտ
հարկադրում էր նրան ծանօթութիւն ունենալ միայն խելք
մարդկանց հետ, որոնցից կարելի էր հարկաւոր բան սովորել.
վասն որոյ նա պահպանեց իրան զանազան յիմարութիւննե-
րից և էնդուր համար ամէն խելք մարդիկը նրան սիրում էին
և պատւում էին: —



Բարեգործ աղայ :

Մտնելով քաղաքի մօտ անցեալ տարի մէկ սաղաղի դէպքեացաւ , էնդուր համար որ քամիի սատակութիւնից կըրտիւր պատում էր ամէն տները չորս կողմից և գեղացիքը չէին կարանում մէկ մէկու օգնել : Բերել քան ութսուն մարդ , որոնց մէջ կային հիւանդներ , ծերեր , կանայք , մանկուներ և աղքատ մշակներ , մէկ քանի սհաթումը զրկեցան իրանց տներէ , հագուստից և ամէն ապրուստից : Ասկծալի էր տեսնելը էս ողորմելի մարդկանցը իրանց աղքատ և հիւանդ տղերքով , որք լեւտանում էին ցուրտից , (էնդուր որ էս կըրտիւր պատահեցաւ աշունքի վերջին) , որք տնքում էին , լաց էին լինում , էս կողմը էն կողմն էին ընկնում և իրանց համար կենալու տեղ էին պառում : Են տեղի բարեգործ քահանան , որ ինքն էլ բոլոր իրառունցածը կորցրել էր , չէր միտք անում իրա գլուխը ազատելու համար և շտապում էր օգնել ողորմելի մարդիկներին , որք բոլոր նրա չորս կողմը պատած տնքում էին և լաց էին լինում : Ենդուր համար նա քնաց ման եկաւ մօտիկ գեղեքումը և քարոզելով հետեւեցաւ էն ողորմելի մարդկերանցը տեղաւորել ողորմած մարդիկերքի տուններումը . ամէն տեղ նա հաւաքում էր լիող , հաց , շոր , և լրագիրներումը (գաղէթներումը) տպեց այս զարհուրելի կրակի պատմութիւնը : Երա աշխատանքը և հետեւութիւնը դարդակ չ'անցկացան , ամէն տեղերից սկսան ուղարկել նրա մօտ օգնութիւն լիողով , հացով , շորերով . և էս պատուելի քահանան բաժանում էր ողորմելի մարդկերանցը ուրախութիւնով , արդարութիւնով և զգուշութիւնով : Եդ ժամանակը եկաւ նրա տուն մօտիկ գիւղից մէկ պատիկ տղայ : Ատխնալով մտաւ նա քահանայի տունը , և ասաց , ես մէկ խնդիրը ունիմ ձեզանից , տէր տէր , եթէ դուք չէք բարկանալ : Ես սիրելի , պատառխան աւաւ քաղցրութեամբ քահանան . ինչ կարեմ էս անել քեզ համար . ես պատրաստ եմ : Ե . դուք չէ՞ պէտք ինձ օգնէք , ասաց պատիկ տղան , ես միայն խնդրում եմ , որ դուք էս լիողը և էս հին շորերը վեր առ-

նէք ինձանից ողորմելի այրւածներ չամար : Ղշմարիտ է ,
թէպէտ էս շատ փոքր բան է , բայց ես աւելի ոչինչ չ'ունիմ ,
ես շատ կրցանկանայի մէկ օգուտ բան անել մեր ողորմելի
այրւածներին չամար . ես շատ ցաւում եմ նրանց չամար :
Իմ քոյրս , որ ամենեւին ոչինչ բանով չի կարող օգնել ,
ասում էր ինձ , որ ես այս փոքր բանով ձեզ մօտ չըգամ :
բայց ես չուղեցի իմ միտքս փոխել , եկել եմ հստեղ և
խնդրում եմ վեր առնէք այս փոքր ընծայարերութիւնս :
Ղաւ շատ լաւ ես արեւ , սիրելի՛ որդի իմ , պատասխան տը-
ւաւ . քահանայ , և քաղցր արտասուները վաղեցին ուշքերիցը :
Մէն տւած բանը , ինչ որ խտակ սրտով է տրուում , իրա-
դինք ունի . ուրեմն քունն էլ դին ունի . մի՛ կորցնիր երբէք
քո այդ ազնիւ զղացմունքը . հետեւի լաւութիւն անել ինչ
բան կարող ես . քո հոգին միշտ կ'ուրախանայ և Մտուած
բեղ կըլարձատրի : —

Բարբեռքի

Ղմեռւայ մէկ սաստիկ ցուրտ օր Միւստը և Բաղրատը
անց էին կենում տալիից . ճանապարհին տեսան նրանք ձիւնի
վրա պառկած մէկ անծանօթ մարդ , որ երեւում էր թէ շատ
խոր քնով քնած է : Միւստի սիրտը ցաւեց նրա համար և
հասկանալով , թէ նա կարող է սառչել հստեղ , գնացնրա
մօտ և սկսաւ զարթացնել : Դատ շարժեց անծանօթ մար-
դուն , բայց նա չըպարժաւ : Ղաւ շատ երկար ժամանակ կը-
շարժեա դրան , ասաց Բաղրատը ծիծաղելով . դա չի զարթել ,
հնդուր համար , որ հարբած է , թող դրան և գնանք , շատ
ցուրտ է : — Ոչ , պատասխան տւաւ Միւստը , ես չեմ
կարող սրան հուլէս թողնել , շատ կարելի է որ էս խեղճ մար-
դը սառչի . թէ և սա հարբած էլ լինի , բայց էլի մարդ է :
և հնազա մարդ է , որին պէտք է մենք օգնենք : Ինչ որ ձեռ-
քիցս կըդայ , ես ամէն բանը կ'անեմ , որ աղատեմ սրա կեանքը :
Ինչ կամենաս արա՛ , ասաց բարիութիւնով Բաղրատը , ես չեմ
կանդնիլ հստեղ և չեմ սառչիլ : Իս տեսելով նա գնաց : —

Ինչ ժամանակը Սմբատը պառկած մարդուն ծածկեց ձնով, Էնդուր համար որ լսել էր, թէ ձիւնը տարայնում է, և շուտով վաղեց մօտիկ գիւղը, որ սայլ բերի: Արա բաղդից պատահեցաւ մէկ բարեսիրտ գեղացի, որ գնում էր քաղաքից: Արա օգնութիւնով քիչ ժամանակի մէջ կիտամեա մարդուն շունչի բերին և Սմբատը ուրախ ուրախ վաղեց իրա տուն: Պար ի՞նչ էր միտք անում Սմբատի վերայ. և ի՞նչ էր ասում Քաղրատի համար: Արանցից որին կ'ուզէք աւելին մանիլ:

Նորահասի բարեբարութի:

Քարեպաշտ ծնողաց մէկ հատիկ դուստր անունը Հռիփսիմէ սաստիկ ցուրտ ձմեռւան ժամանակը մեծ ջանքով, որ տեղ որ պատահում էր, հատիկներ և վշրունքներ էր ժողովում: Այլ որ բաւականին պատրաստեց, օրը երկու անգամ դուս էր դալիս տնից և էն ժողոված հատիկներից և վշրունքներից ածում էր հայաթի մէջ: Ամէն կողմից գալիս հաւաքւում էին թռչունները և կերակրւում էին: Խեղճ աղջկայ ձեռքերը կուշ էին եկած ցրտից:

Այլ անգամ սրա ծնողը մօտիկ էին տալիս սրան, շատ ուրախանում էին և հարցնում էին սրանից. Հռիփսիմէ, էդ ի՞նչ ես անում: Տեսէք, պատասխան տաւ աղջիկը, ողջ գետինը ծածկած է ձնով և սառուցով. էնպէս որ խեղճ թռչունները ոչինչ չ'են գտնում ուտելու, մեղքս են գալիս նրանք: Ահա ինչի՞ համար եմ կամենում օգնել նրանց, ինչպէս որ հարուստները օգնում են խեղճերին: Քայց դու միթէ կարող ես ողջ թռչուններին կերակրել, ասաց նրան հայրը: Պատասխանեց Հռիփսիմէն միթէ բոլոր աշխարհքիս երեսին երեսերը էդ չ'են անում, ինչ որ ես հիմի անում եմ, միթէ նրանք մտքին չ'են բերում հեռեւել հարուստներին, որ ամէն տեղ օգնում են խեղճերին, տալարախաներին և չունեւորներին: Հայրը մօտիկ արաւ աղջկայ մօրը և ասաց. հիւ, ինչ անմեղութիւն է:

Երբ բանասերէլս:

Ո՛վ դու նըժդեհ ծիծառն անմեղ,
Ի վարանոց դարեալ բունիկ,
Օ՛ր տըրամագին յընդհատ գեղգեղ
Նըւագս հընչես, ողորմ հաւիկ:

Թէ տարանջատ քոյդ վարուժան
Բըքեղ միայն աստէն ելիք
Յանմըխիթար սուգ ինձ նըման,
Ողբա ողբա, ողորմ հաւիկ:

Ե՛լ երանի՛ր քեզ բիւր հաղար
Օ՛ր թուխս հարեալ ընդ սար ընդ ձոր,
Ե՛ղատ յայերս յածիս կոճիս
Կըկնեալ ըզքո զերգ տարիաւոր:

Յանկարծ և ես այլ զիս եղունկ.
Դառն արտասուք եհ իմ՝ բաժին.
Հեծեմ տըխուր 'ի յարկս անձուկ
Յիշեալ ըղիառս իմ՝ զառաջին:

Ոչ ինձ արիւոյն ծագէ նըշոյլ
Յաղջամըղ ջին յայս օթեան,
Ե՛ւ ոչ հողմիկ հեշտին 'ի սոյլ
Հասուցանէ զիմն առ.քեղ ձայն:

Յառաջ խաղայ և այս աշուն,
Ե՛ւ դու կաղմիս յերկայն ուղին.
Շէնք և աւանք և ծովք անհուն
Բաղլոր 'ի ձայնէդ ողջունեսցին:

Իօհ ես այդուն այդուն 'ի կոճ

Օ աչս իմ բացեալ արաստուալից,
Եղերական քյին երգոց
Յայնժամ մըտօքս 'ի լուր կացից:

Սինչ տարախով 'ի խկատ մըրըիկ
Թօթալեայի ձիւն վըքալից,
Ես կարծեցից Թէ քո ձայնիկ
Ինձ և յայնժամ է ողբակից:

Ո՞վ գու նըժգեհ ծիծառն աղատ
Բղբեղ առնեմ ես երդմընի.
Գընա ողջամբ յերկիր 'ի զատ,
Ողջամբ դարձցիս 'ի դարնայնի:

Կաչ մի գըացես դու աստանօր,
Ի նմա հանգիր զայն երկկուն.
Տուր ինձ զյետին ձայնիդ համբոյր,
Եւ երթ ողջամբ հաւիկ սիրուն:

Մայր և Մանկի:

Գեղեցկահիւս յորրանի
'Նընջէր մանուկ գեղանի. —
Մօր քո միակ յոյս չըքնաղ
'Նընջեա մանկիկդ ընդ ծիծաղ:

Մայրն առ նուլաւ գըլխակօր
Օքնօտ 'ի ծղիւրն յենոյր
Եւ հիանայր իբր 'ի կախ. —
'Նընջէր մանկիկն ընդ ծիծաղ:

Յառեալ դիտէր սիրասուր
Հայեցուածով յորդին իւր,

Ղիտէր ժբստէր մայրն ուրախ, —
Նընջէր մանկիկն ընդ ծիծաղ:

Եւ 'ի շրթանց թռուցեալ սէր
Որ 'ի սրբօրն կայր՝ ասէր:
Նընջեալ քաղցրիկ՝ քաղցր 'ի քուն,
Ն'քուն զուարթնոց դու հանգոյն:

Օխ՜նչ հատուցից ո՛վ Աստուած
Ընդ պարգեւիդ գերապանծ. —
Քեզ նըւիրեմ զիմ մանկիկ. —
Նյլ դու նընջեալ աստ այժմիկ:

Ո՛հ քեզ, զհայցուած քո, ո՛վ կին,
Տարան հրեշտակք 'ի յերկին,
Եւ քաղցրացաւ ձօնիդ յոյժ.
Նյլ քեզ մանկիկ նինջդ անոյշ:

Յայնժամ սրովքէ լուսաւից
Իջեալ անդէն 'ի յերկնից՝
Մերձ ի յորրանն հասանէ:
Օխ՜ խնդրես ո՞ սերովքէ:

“ Մանուկդ որ ինձ նըմանիս
Իսէր, օ՞ն եկ դու ընդ իս,
Եկ և ընդ քեզ համազոյգ
Մինչև յաստղունքս թռիցուք:

“ Օ աշխարհ ըզցաւ թող 'ի բաց.
Քանզի 'ի թիւս հրեշտակաց
Պիտի մանկիկ մի յերկին.
Եկ և լըցես ըզթերին ,,”

Եւ զձիւնափայլն իւր ըղթեալ
 Շարժեալ հրեշտակն ըղթեթեալ,
 Թըռեալ . . . ո՞ մայր, ո՞հ, եղուկ.
 Սահ .քեզ, մեռաւ քո մանուկ:

ԱՌ. Ա. Կ

Առաւ և հոգի:

- Առուակը ձայն ձրգեր կու լար
 Կը կըսկըսար կը մըռմըռար,
 Չայրը բռնեց հովիւան ու ձոր
 Լացը հրնչեց լեռ ու ծործոր,
 Լըսեց հովիւն՝ ու գըթալով
 “ Առուակ, ըսաւ, ինչո՞ւ լալով
 ,, Այսպէս ի՞ժեր կուլաւ կողքաս
 ,, Կը կըսկըսաս կը մըռմըռաս,,
 — “ Ի՞նչպէս չըլամ,, պատասխանեց
 Առուն՝ ու խոր մը հառաչեց
 “ Երբոր աղտոտ քու ոչխրներն
 ,, Կը պըղծեն իմ պայծառ ջրերն,,
 — “ Աւ չեմ թողուր,, հովիւն ըսաւ,
 Ու հօտն ուրիշ աղբիւր տարաւ:
 Առուն նոյնպէս կու լար կ’ողբար
 Կը կըսկըսար կը մըռմըռար:
 “ Առուակ ըսէ ի՞նչ, ի՞նչ ունիս
 ,, Որ անդադար կը գանգըտիս,,
 — “ Ահ, ես թըշուառ եմ միշտ թըշուառ,,
 Կըսէր առուն անմըխթար,
 Կը կըսկըսար կը մըռմըռար:
 “ Ախարս ջրբիս պաղ ու պայծառ
 ,, Ոռուն ոչխարք չեն մօտիկնար,

,, Լճիկները զեւ թողեր զնացեր
 ,, Ու վրաս նայիլ ալ չեն ուզեր, ,,
 Դարձեալ հովիւը դըժտով
 Բերաւ իր հօտն առուակին քով,
 Թաղուց որ հոն եղերքն արծին
 Բայց ջրերուն բնաւ չի դպչին:
 Բայց առուն միշտ կուլար կ'ողբար
 Կը կըսէր ինքն ինքն մըմըմըմ:
 — Բայ առուակ ըսէ հոգիս
 ,, Ի՞նչ նեղութիւն ի՞նչ ցաւ ունիս,
 ,, Որ միշտ նոյնպէս կուլաս կ'ողբաս
 ,, Կը կըսէր ինքն ինքն մըմըմըմ, ,,
 Լճուն նորէն հաւաքելով
 ,, Ի՞նչպէս չի լամ, ըսաւ ցաւով,
 ,, Որ ոչխարներու կը մայեն
 ,, Երեւոյ չորս դէս կը հաջեն, ,,
 Եւ ան ասեւ հովիւն իմացաւ
 Որ լաւիանն ինքն իրեն է ցաւ,
 Դեռ ընելու ճարակ չըկայ,
 Թող անդադար լայ ու ողբայ,
 Թող կըսէր ինքն ինքն մըմըմըմ:

Ս. Լ. Ի. Ն.

Երեւ	Կող	Միտւ	Կողիւ
8	31	կըլ կըթուծիւն	կըթուծիւն
25	25	ընկնուլ	ընկնուլ
44	8	լուրոք	լուարուք
47	21	նոր	նորա
72	14	բերմունքերը	բերմունքները
77	3	նա	նրա
78	3	երբսը	երբոր
80	13	աների	տների
—	7	ակլորին	ակլորին
87	12	ուլ ալ	տը ուալ
88	24	մարդիք	մարդիկ
90	32	իս	լս

3m

Page	Page	Page	Page
81	82	83	84
85	86	87	88
89	90	91	92
93	94	95	96
97	98	99	100
101	102	103	104
105	106	107	108
109	110	111	112
113	114	115	116
117	118	119	120
121	122	123	124
125	126	127	128
129	130	131	132
133	134	135	136
137	138	139	140
141	142	143	144
145	146	147	148
149	150	151	152
153	154	155	156
157	158	159	160
161	162	163	164
165	166	167	168
169	170	171	172
173	174	175	176
177	178	179	180
181	182	183	184
185	186	187	188
189	190	191	192
193	194	195	196
197	198	199	200

21

